

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՄ

ديجيجادو

Հրատարակություն Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ ԸՐԸՄ-Ի 100-ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ ԵՂԵՈՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՒ

(6 Ապրիլ 2007)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Նախագահական պատմական հպարտառիթ այցելություն	1
ԽՍԲԱԳԻՐ Արաքսի Տեղափոխում	Արամ Խաչատրեանի «Գայեանէ» թատերապարը Եգիպտոսի մէջ Գարուիկ Արսլանեան	4
ԽՍԲԱԳՐՈՒԹԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ Պերճ Թերզեան	Եգիպտացի եւ Հայ ժողովուրդներու բարեկամութիւնը խորհրդանշող յուշակոթողի բացում Հրանդ Զեչիշեան	6
ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ ՁԵՒԱԽՈՐԴՄ Շահէ Լուսարարեան	Հարցազրոյց ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Պրն. Պերճ Թերզեանի հետ	7
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՈՒԱԾԸ Անի Պողոսեան	ՀԲԸՄ-ի Հարիւրամեակի Գիտաժողով եւ Տօնակատարութեանց Եզրափակիչ Արարողութիւն, Հայաստան եւ Արցախ Յովիկ Եօրտէքեան	12
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Nubar Printing House	ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի հարիւրամեակի յերբելենական հանդիսութիւններու Բ. Ձեռնարկ Նազարեթ Գարթալեան	16
	Հարիւրամեայ փառապանծ գործունէութեան արժանի վաւերագրութիւն Յակոբ Ծուլիկեան	17
	Համագաղութային յուշահանդէս Ապրիլեան Եղեռնի 92-րդ տարելիցին առթիւ	19
	Արի Երզնկացեանի պատուաբեր յաջողութիւնը	19
	Հաշուեկշիռ Սաթենիկ Չազըր Ֆոնտի	20
	Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչական նոր կազմը	22
	Ոչ եւս է Հրանդ Թուֆայեան	23
	Անդամական	24

«Տեղեկատու»-ի ներկայ թիւին հետ, որպէս յաւելում, առանձին գրքոյկով կը բաժնուի ԱԺ-ի պատգմաւոր Հրանտ Զակոբեանի Ապրիլ 24-ի պատգամը:

ԹԻՒ 43 Նոր Շրջան
ԱՊՐԻԼ 2007



ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՊԱՐՏԱՌԻԹ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Անբացատրելի է այն զգացումը որ կը պարուրե հոգիները ժողովուրդի մը զաւակներուն, որոնց բախտ կը վիճակուի ժամանակակիցը դառնալ իրենց հայրենիքին անկախացման եւ պետականութեան վերականգման:



Նախագահ Յոսիկ Մուկարաբ կ'ընդունի Նախագահ Ռոպերթ Զոչարեանը

Հայոց պատմութեան այս ժամանակաշրջանին, աշխարհասփիւռ հայերս եղանք եւ ենք մեր ժողովուրդին այն զաւակները, որոնց վիճակուեցաւ այդ բախտը:

Մեր հայրենիքի անկախութեան 15 տարիներու այս կարճ ժամանակաշրջանին, Անկախ Հայաստանի իրերայաջորդ երկու նախագահներուն Լեւոն Տէր Պետրոսեանի եւ Ռոպերթ Զոչարեանի Եգիպտոս այցելութիւնները, Եգիպտոս հայերուս հոգիները լեցուցին հպարտութեամբ եւ այնպիսի զգացումներով, որոնք դժուար է բնութագրել:

ՀՀ Նախագահ Ռոպերթ Զոչարեանի Ապրիլ 14-16 երկարող պաշտօնական այցը Եգիպտոս եւ հանդիպումը Նախագահ Յոսիկ Մուկարաբի հետ, ապա Նաեւ Ալ Ազհարի Մեծ Իմամ Շէյխ Սայետ Թանթաուիի, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար տորթ. Ամր Մուսայի, Եգիպտոսի Խորհրդարանի Նա-



Նախագահ Ռոպերթ Զոչարեան, Ալ Ազհարի Մեծ Իմամ Շէյխ Սայետ Թանթաուիի հետ հանդիպումին ընթացքին

խագահ տորթ. Ֆաթհի Սուրուրի, Եգիպտոսի վարչապետ Ահմետ Նազիֆի եւ այլոց հետ եղան արդիւնաւետ ու յանգեցան տնտեսութեան, զբօսաշրջիկութեան, տեղատուութեան, ապահովութեան, կրթութեան, քրեական, իրաւաբանական եւ այլ բնագաւառներ

ընդգրկող ոլորտներուն մէջ գործակցութիւն ապահովող պայմանագրերու ստորագրութեան:

Գահիրէի եւ Երեւանի համալսարաններուն միջեւ կնքուեցաւ Նաեւ պայմանագիր Գահիրէի մէջ հայագիտական ամպիոն հաստատելու մասին:

Նախագահ Զոչարեան ԱՊԼ դեսպաններուն հետ կայացած հանդիպման ընթացքին ելոյթ ունենալով անդրադարձած է Պաղեստինի, Լիբանանի եւ Իրաքի մէջ տեղի ունեցող պայքարներուն, ընդգծելով որ միասնութեամբ եւ կազմակերպուած ձեւով կարելի է վերականգնել խաղաղութիւնը եւ հասնիլ ցանկացուած արդիւնքներու:



Նախագահ Ռոպերթ Զոչարեան եւ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար տորթ. Ամր Մուսա

Ան անդրադարձած է Նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնահարցին կարգաւորման գործընթացին, գնահատելով ԵԱՀԿ միջնորդական ջանքերը:



Նախագահ Քոչարեան ԱՊԼ անդամ երկիրներու դեսպաններուն միջոցաւ կոչ ըրած է անոնց կառավարութիւններուն ձեռնպահ մնալ տարբեր կազմակերպութիւններու մէջ ԼՂՀ խնդրին շուրջ բանակցային գործընթացներուն հետ առընչութիւն չունեցող բանաձեւերուն միանալէ, որոնք մեծապէս կը վնասեն ԵԱՀԿ միջնորդական ջանքերուն:

Նախագահ Քոչարեանի եւ իր տիկնոջ եռօրեայ պաշտօնական այցելութեան առթիւ իրենց ընկերացող պատուիրակութեան մաս կը կազմէին ՀՀ Արտաքին գործերու Նախարար Վարդան Օսկանեան, Մշակոյթի Նախարարուհի Յասմիկ Պօղոսեան եւ ՀՀ Առեւտուրի եւ Տնտեսութեան Նախարար Կարէն Ճշմարիտեան նաեւ գործարարներ եւ զանազան լրատուամիջոցներու թղթակիցներ:

Շաբաթ, 14 Ապրիլի երեկոյեան Եգիպտոսի մօտ ՀՀ Դեսպանութիւնը ի պատիւ ՀՀ Նախագահին եւ անոր ընկերակցող պատուիրակութեան, ընդունելութիւն մը կազմակերպած էր դեսպանատան պարտեզին մէջ:

Նախ քան ընդունելութիւնը, Նախագահ Քոչարեան դեսպանութեան դահլիճին մէջ եւ ներկայութեամբ ՀՀ-ի Դեսպանին, Հայ Առաքելական եւ Կաթողիկէ Առաջնորդներուն հանդիպում ունեցաւ դեսպանատան բարեկամներու խորհուրդի



Նախագահ Ռոպերթ Քոչարեան կը պարգևատրէ տիար Պերճ Թերզեանը

ինը անդամներուն հետ եւ շնորհակալագրեր յանձնեց անոնց 15 տարիներ ՀՀ-ի Եգիպտոսի Դեսպանատան իրենց բերած անընդմեջ օժանդակութեան համար:

Ի պատիւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակին պետք է նշել, թէ շնորհակալագրեր ստացան ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեան, Նոյն Յանձնաժողովի փոխ ատենապետ տիար Օննիկ Կարիպեան եւ Գահիրէի Մասնաճիւղի վարչական անդամ եւ նախկին երկարամեայ ատենապետ տիար Նորայր Տեօվլէթեան:



Նախագահ Ռոպերթ Քոչարեան կը պարգևատրէ տիար տիար Օննիկ Կարիպեանը

Ապա՝ դեսպանատան պարտեզին մէջ տեղի ունեցաւ քոթէյլ ընդունելութիւն, որուն ընթացքին ներկայ եգիպտացի պետական այրերը, Եգիպտոսի Հայ Առաքելական եւ Հայ Կաթողիկէ համայնքներուն

Առաջնորդ Սրբազան Հայրերը, մեծ թիւով օտար դեսպաններ, դիւանագիտական անձնակազմի ու մամուլի ներկայացուցիչներ, նաեւ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Թեմական եւ Զաղաքական Ժողովներու անդամներ ու սեղմ թիւով եգիպտահայեր առիթը ունեցան հանդիպելու եւ զրուցելու Նախագահ Քոչարեանի, իր տիկնոջ ու իրենց ընկերակցող պատուիրակութեան անդամներուն հետ:

Եգիպտոսի Արաբական Հանրապետութեան եւ Հայաստանի



Նախագահ Ռոպերթ Քոչարեան կը պարգևատրէ տիար Նորայր Տեօվլէթեանը



Հանրապետության առաջին տիկիններուն՝ Սիւզան Մուպարաքի եւ Պելլա Քոչարեանի հանդիպումը տեղի ունեցաւ Հայաստանի պատուիրակութեան այցելութեան առաջին օրը:

Երկրորդ օրը Պելլա Քոչարեան ԵԱՀԲնապահպանութեան Նախարարի տիկնոջ Սիրվէթ Մէկիտ Ժորժի ընկերակցութեամբ այցելեց Հին Եգիպտոսի պատմական «Ֆոսթաթ» թաղամասի դպտիներու թանգարանը, որ կը պարունակէ 16.000 ցուցօն, որոնցմէ միայն 1500-ը ցուցադրուած են 29 սրահներու մէջ: Տիկին Քոչարեան մեծապէս տպաւորուած էր ու զարմացած հայ եւ դպտի եկեղեցիներու գանձերուն նմանութենէն:

Եգիպտոսի եւ Հայաստանի առաջին տիկիններն ու ԵԱՀԲնապահպանութեան Նախարարին տիկինը այցելեցին նաեւ Գահիրէի Քաղցկեղի Մանկական Հիւանդանոցը, որուն պաշտօնական բացումը պիտի կատարուի յառաջիկայ Յունիսին:

Սիւզան Մուպարաք նախաձեռնած է այս հիւանդանոցին կառուցման, որուն հանգանակութիւններով մասնակցած է եգիպտացի ժողովուրդը:

Հիւանդանոցին մէջ կրնան միաժամանակ բուժուիլ մինչեւ 17 տարեկան 180 երեխաներ:

Մեծապէս տպաւորուած հիւանդանոցին մէջ առկայ նորագոյն սարքաւորումներէն, մաքրութենէն եւ ներկայ առողջապահական շրջանակի կարեւոր դէմքերու ընդունելութենէն ու տրուած բացատրութիւններէն, տիկին Քոչարեան նշեց, թէ ԵԱՀԲնապահպանութեան առաջին տիկնոջ այս շնորհակալ գործը պատմական նշանակութիւն ունի:

ՀՀ Նախագահին այցը Եգիպտոս կը համընկնէր Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ դիւանագիտական կապերու հաստատման 15-ամեակին:

Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեանի գլխաւորութեամբ, ՀՀ Դեսպանութիւնը նախատեսած էր կարգ մը միջոցառումներով նշել այս պատմական իրադարձութիւնը:

Կիրակի 15 Ապրիլի առաւօտեան, Կիզէյի «Էլ Հուրրիա» պարտէզին մէջ տեղի ունեցաւ հայ-եգիպտական բարեկամութեան նուիրած յուշարձանին բացումը, գործ՝ աղեքսանդրահայ արուեստագետ-արձանագործ Սարգիս Թօսունեանի: (Տես էջ 6):

Նոյն օրը երեկոյեան ժամը 8.00-ին Գահիրէի Օբերայի Մեծ Դահլիճին մէջ, Եգիպտոսի մօտ ՀՀ Դեսպանութեան եւ Գահիրէի Օբերայի Տան համագործակցութեամբ, Հայաստանի Ալեքսանտր Սպենդիարեանի անուան Ազգային Օբերայի թատերապարտիւմը եւ նուագախումբը մեծ յաջողութեամբ ներկայացուցին Արամ Խաչատուրեանի «Գայեանէ» պալէն:

Նոյն ձեռնարկը կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Եգիպտոսի Առաջին տիկնոջ՝ Սիւզան Մուպարաքի:

Եգիպտոսի եւ Հայաստանի Առաջին Տիկինները իրենց ներկայութեամբ պատուած էին այս բացառիկ ելոյթը, որուն ներկայ էր նաեւ եգիպտական պետական, օտար դիւանագիտական, տեղեկատուական եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներէ, հայ եւ օտար գաղութներու անդամներէ ու եգիպտացիներէ բաղկացած արուեստի սիրահարներու հոծ բազմութիւն մը:

Իր բազմակողմ երեսներով, ղեկավարութիւն, բեմադրութիւն, կատարում, զգեստաւորում, բեմայարդարում, լուսաւորութիւն եւայլն, «Գայեանէ» պալէին ներկայացումը արձանագրեց սպասուած յաջողութիւնը, որուն կայացման համար պատասխանատուներու կողմէ թափուած ճիգերը Հայաստանի եւ Եգիպտոսի մէջ ապարդիւն չանցան:

Հանդիսատեսը իր հրճուանքն ու գոհունակութիւնը արտայայտեց երկար ծափահարութիւններով, իսկ ներկայ եգիպտահայութիւնը այդ օր կրկին անգամ հպարտացաւ, այս անգամ իր Խաչատուրեանով ու անոր ստեղծագործութիւնը ներկայացնող հայրենի իր քոյրերով եւ եղբայրներով: (Տես էջ 4):

Թող միշտ կանգուն մնան դիւանագիտական կապերը Եգիպտոսի եւ Հայաստանի միջեւ ու միշտ վառ մնայ բարեկամութիւնը արաբ եւ հայ ժողովուրդին:



ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ «ԳԱՅԵԱՆԷ» ԹԱՏԵՐԱՊԱՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Եգիպտոսի Եւ Յայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման տասնհինգերորդ տարեդարձին առթիւ, Յայաստանի Ալ. Սպենդիարեանի անուան Ազգային Օրերայի թատերախումբը/Պալէն/ու նուագախումբը 15 եւ 18 Ապրիլ 2007-ին յաջորդաբար Գահիրէի Օրերայի եւ Աղեքսանդրիոյ «Սայետ Տարուիշ» սրահին մէջ ներկայացուցին Արամ Խաչատրեանի «Գայեանէ» թատերապարը՝ հովանաւորութեամբ Եգիպտոսի առաջին տիկին Սիւզան Մուպարաքի:

Այս անմոռանալի ներկայացումներուն մասին գրել ուզեցի ոչ թէ այդ բացառիկ ելոյթները պարզապէս նկարագրելու, այլ իմ անձնական փորձառութիւնս փոխանցելու՝ որպէս այդ հիանալի ներկայացմանը յետնաբեմէն / քուլիսներէն / հետեւելու բախտը ունեցող:

Այս ներկայացումը նաեւ շատ հրաշալի փորձառութիւն մըն էր եգիպտահայ մեր 12 պատանիներուն համար, որոնք, ընտրուելով համայնքիս սիրողական «Չանգեզուր» պարախումբի կրտսեր անդամներէն /12-14 տարեկան/, բախտը ունեցան մասնակից դառնալու «Գայեանէ»ին՝ Յայաստանի արհեստավարձներու կողքին:

Հոս պարտք կը զգամ յատուկ շնորհակալութիւնըս յայտնել տիկին Էլէն Մարտիրոսեանին, որ հակառակ Եգիպտոսէն դուրս գտնուելուն, առիթը օգտագործեց եւ մեր զաւակներուն՝ իր նախկին սաներուն առիթը տուաւ այսպիսի հպարտալի ելոյթի մը իրենց համեստ մասնակցութիւնը բերելու:

Մեր պատանիները թէեւ փոքրիկ դեր մը ստանձնեցին, բայց իրենց համար ամենանշանակալին այդ պատեհութիւնն էր, անմիջական շփումն ու յարաբերութիւնը հայրենի արուեստագետներուն հետ եւ այդ պատեհութեան առթած գեղարուեստական ու ազգային ոգեւորութիւնը:

Ուրբաթ, 13 Ապրիլին տեղի ունեցաւ մեր պատանիներուն առաջին փորձը «Կոկանեան» սրահին մէջ՝ ներկայութեամբ թատերապարի անձնակազմի հինգ պարողներու եւ ղեկավարութեամբ փորձառու եւ համբերատար պարուսոյց տիար Յովհաննէս Դիւանեանի:

Մեր պատանիները թատերապարին պիտի մասնակցէին երկու մուտքով. առաջինը գիւղական ժողովրդական տօնախմբութեան մը պարը՝ առաջին արարի առաջին տեսարանին մէջ, իսկ երկրորդը՝ վերջին արարի վերջին տեսարանին՝ Գայեանէին ու Արմէնին պսակի ուրախ արարողութեան՝ կատարելու համար ջահակիրներու դերը:

Շաբաթ առաւօտեան տեղի ունեցաւ մեր պատանիներուն երկրորդ եւ վերջին փորձը Գահիրէի

օրերայի մեծ բեմին վրայ: Պատանիներուն հաւասար եւ նոյնիսկ քիչ մը անլի ոգեւորութիւն համակած էր նաեւ մեզի՝ «Չանգեզուր»ի պատանիներուն ծնողներուս, որոնք բոլորն ալ կարծես ունէին իրենց զաւակներուն հետ բեմական պատասխանատուութիւն ստանձնածի անբացատրելի զգացում ու յուզում:

Երբ առաջին անգամ տեսանք բեմը, մեր աչքերը գրաւեցին հայաշունչ տեքորներու հրաշալի զարդարումները: Ուղղակի գմայլելի էին հայկական գոյներով պատրաստուած բեմական զանգւածող ձեւաւորումները, որոնցմէ չորս դիմայինները շարժական էին, իսկ երկու քովընտիները՝ մնալուն:

Թատերապարի արարները կը սկսէին երկրորդ վարագոյրի դեր կատարող ժողովրդական տարազներով պարուհիներու գեղանկար պաստառներով, մինչ տեքորային պատկերներուն մէջ գերիշխող տեղը հայոց մեր լեռնաշխարհի տեսարաններն էին, որ մեզ անզգալիօրէն կը տեղափոխէին դէպի հայ իրականութիւն:

Անկարելի էր հիացմունքէ զատ ուրիշ զգացողութիւն ունենալ թատերապարի մեր արուեստագետներուն հանդէպ, որոնք դասական պարի կատարեալ վարպետներ էին, բոլորն ալ երիտասարդ, ներկայանալի, գեղեցիկ ու բարեկազմ, բեմական վառ դիմարտայայտութեամբ, մէկ խօսքով՝ բացարձակ արհեստավարժ:

Արուեստագետներուն հետ մեր՝ անակնկալօրէն Մեծ Բեմ յայտնուածներուս միջեւ շատ շուտով հաստատուեցաւ լիակատար փոխըմբռնում: Երկուստեք շատ ուրախ էինք իրարմով, մենք՝ հայրենի արուեստագետներուն միջոցով մեծ արուեստին առընչուելու կարելիութեան համար, իրենք՝ հիւրախաղային օտար երկրի մը մէջ հայեցի շունչը պահպանող ազգի զաւակներուն հանդիպած ըլլալուն համար:

Այս ամէնուն վրայ անելցնենք Արամ Խաչատրեանի երաժշտութեան համակող շունչը, որ կը թրթռար եւ այսօր ալ կը շարունակէ թրթռալ ականջներուս մէջ:

Յայաստանի թատերապարախումբը եկած էր Եգիպտոս Ալ. Սպենդիարեանի անուան օրերայի նուագախմբային կազմին հետ, 75 նուագողներով՝ ղեկավարութեամբ երիտասարդ նուագավար Կարէն Դուրգարեանի: Երիտասարդ երաժշտը որ շեղ սրինգի /ֆլիւթ/ նախկին մենակատար Է, 2000 թուականէն սկսեալ կը ղեկավարէ արաբական աշխարհի հռչակաւոր, լիբանանցի երգչուհի Ֆէյրուզի մասնակցութեամբ կայացած գլխաւոր համերգները:



Անկեղծօրէն պիտի ըսեմ, թէ որպէս ոչ երաժիշտ, բայց որպէս երաժշտութիւն սիրող թերեւս շատերուն պէս ինծի ալ սիրելի, բայց միայն մասնակիօրէն ծանօթ էր Ա. Խաչատրեանի երաժշտութիւնը եւ կը յուսամ ինծի պէս ուրիշներ ալ կան, որոնք չէին գիտեր, թէ այդ հանրածանօթ համանուագային /սիմֆոնիք/ եղանակները ինչ ստեղծագործութիւններէ հատուածներ են եւ կամ ինչ կապ ունին «Գայեանէ» թատերապարհին հետ...

Ինծի համար շատ թանկագին են նաեւ ծանօթութիւնները արուեստագետներուն հետ, որոնք կ'ուզեմ կիսել ընթերցողին հետ:

Աղեքսանդրիոյ մէջ Գայեանէի դերակատարն էր Մարիա Դիւանեան՝ տիար Յովհաննէս Դիւանեանի դուստրը, շատ ազնիւ եւ համեստ ժպիտով անձ մը, որուն արդէն ծանօթացած էինք Գահիրէի ելոյթէն:

Գահիրէի մէջ Գայեանէի դերակատարն էր Սուա Ադամեան՝ լաւագոյն մենակատարներէն մէկը, որ նաեւ կը դասաւանդէ Հայաստանի պարարուեստի ուսումնարանին մէջ:

Ռուբէն Մուրատեան Գահիրէի ներկայացման մէջ Արմէնի դերակատարն էր, որ իր բնական ու քաշողական ներկայութեամբ կը գարդարէր բեմը, մինչ անմիջական յարաբերութիւններու մէջ սաստիկ կատակասեր էր ու՝ անմիջական:

Աղեքսանդրիոյ մէջ Ժիգոյի դերը կը կատարէր Չաւեն Յարութիւնեան, իսկ Գահիրէի մէջ Արմէն Գեորգեան, որուն սոսկ կեցուածքն ու նայուաքը կը մատնէին իր մասնագիտական արհեստավարժութիւնը (ան մասնակցած է Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Ամերիկայի թատերապարային ներկայացումներուն):

Նունէի դերը Աղեքսանդրիոյ մէջ վստահուած էր Մարի Յովհաննէսեանին, իսկ Գահիրէի մէջ՝ Ժագլին Սարխոշեանին՝ շատ հազուագիւտ անձնաւորութիւն մը, որ արդէն բոլոր ներկաներուն սիրտերը գրաւեց իր առաջին իսկ ելոյթէն: Անոր պարը թիթեռային թեթեւ թռիչք էր բեմին վրայ՝ մշտական ժպիտը դէմքին: Ան բեմէն դուրս նոյնքան գրաւիչ էր իր մարդամօտութեամբ: Բեմական իր զոյգն էր Սեւակ Աւետիսեան /Գահիրէ/, Լիւսֆիկ Ապրեսեան՝ /Աղեքսանդրիա/:

«Գայեանէ» թատերապարհի բեմադրիչն էր բազմավաստակ մենապարող ու բեմադրիչ Վիլէն Գալստեան, որ իր տիկնոջ հետ իրենց ժամանակին եղած են Գայեանէի եւ Արմէնի ամենայայտնի մենակատարները:

Չեմ կրնար նաեւ չանդրադառնալ ներկայացման փորձերու եւ բուն ելոյթի կազմակերպչական օրինակելի բարձրագոյն մակարդակին, որ շարժեց մեր բարի նախանձը, ինչո՞ւ չէ, նաեւ սորվելու եւ ընդօրինակելու ցանկութիւնը, մինչ մեր մասնակից պատանիները յետնաբեմէն հիացմունքով կը

դիտէին արուեստի այս հրաշքը՝ սպասելով իրենց մուտքի նշանին:

Չեմ կրնար չիշխել պարային տարազներու արտակարգ գեղեցկութիւնը, հայկականութիւնն ու արդիականութիւնը, որ կը շոյէին իւրաքանչիւր հանդիսատեսի հայեացքը՝ անխտիր:

Այս 4-5 օրերը առանձնայատուկ եւ անմոռանալի փորձառութիւն մը եղան մեր պատանիներուն եւ անոնց ծնողներուն համար, փորձառութիւն մը՝ որուն խառնուած են ուրախութեան, հպարտութեան եւ հիացմունքի զգացումները:

Ուստի մեր շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր անոնց, որոնք յղացան եւ իրականացուցին Հայաստանի Ազգային օբերայի թատերապարհումբի եւ Նուագախումբի այս հիւրախաղերը եզրիպտոսի մէջ եւ բոլոր անոնց, որոնք որեւէ ձեւով իրենց նպաստը բերին այս գործին:

Շնորհակալութիւններ նաեւ պարող մեր տասներկու պատանիներուն, ահա ցանկը այդ երջանիկներուն՝ այբբենական կարգով

- 1- Աբրահամ Նաճարեան
- 2- Ալէն Գարգուր
- 3- Ալիսա Տեփոյեան
- 4- Անայիս Օգիրիս
- 5- Ասփէ Ճիգմեճեան
- 6- Զարթին Իրատեան
- 7- Չոյա Կարապետեան
- 8- Ժորժ Նակի
- 9- Մարինա Սիմոնեան
- 10- Րաֆֆի Սուլթանեան
- 11- Ռուբէն Սաատ
- 12- Վարդան Թերզիպաշեան

Շնորհակալութիւններ տիկին Չապէլ Տեփոյեանին՝ «Չանգեզուր» պարախումբի կազմակերպիչին, որ իր ժամանակը ու եռանդը չխնայեց մեզ «ճերմակերես» հանելու համար:

Շնորհակալութիւն «Չանգեզուր»-ի պարողներուն ծնողներուն, որոնք գիտակցեցան պահին կարեւորութեան եւ իրենց կարելին ըրին իրենցմէ սպասուածը լաւագոյնս ամբողջացնելու համար:

Եւ վերջապէս մասնաւոր շնորհաւորանքներ Գահիրէցի 12 փոքրիկ «պալէխստներուն», որոնք փորձեցին իրենց մասնակցութիւնը արդիւնաւորել առաւելագոյնս եւ ով գիտէ անոնցմէ գոնէ ոմանց համար այս փորձառութիւնը կրնայ վճռորոշ դառնալ իրենց ապագային համար...

Գարոլին Արսլանեան



ԵԳԻՊՏԱՅԻ ԵՒ ՐԱՅ ԺՈՂՈՎՈՐՂՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Նախագահի Եգիպտոս այցելության եւ Հայաստանի ու Եգիպտոսի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 15-ամեակին առիթներով տեղի ունեցած միջոցառումներու ծիրէն ներս, 15 Ապրիլ 2007-ի առաւօտեան, Օբերայի հանդիպակաց «Ազատութեան եւ Բարեկամութեան» զբօսայգիին մէջ տեղի ունեցաւ եգիպտացի եւ հայ ժողովուրդներու բարեկամութիւնը խորհրդանշող յուշակոթողի բացման արարողութիւնը:

Բացման ներկայ եղան եգիպտացիներէ ու հայերէ բաղկացած բազմութիւն մը, գլխաւորութեամբ Հայաստանի Արտաքին գործոց Նախարար Վարդան Օսկանեանի ու Գահիրէի քաղաքապետ Մոհամետ Ապտէլ Ազիմ Ուազիրի:

Հայ նախարարը, որ իր խօսքը արտասանեց արաբերէն լեզուով՝ շեշտը դրաւ Եգիպտոս-Հայաստան բարեկամութեան կարեւորութեան վրայ: Իսկ քաղաքապետը իր խօսքին մէջ մասնաւորապէս յիշեց Եգիպտոսի պատմութեան տարբեր շրջաններու ընթացքին տարբեր բնագաւառներու մէջ հայերու բերած կարեւոր ներդրումները:

Այս յուշակոթողը, որ իր տեսակին մէջ առաջինն է Եգիպտոսի համայնքի մշակոյթի պատմութեան մէջ, ստեղծագործութիւնն է Աղեքսանդրահայ արձանագործ Սարգիս Թօսունեանի, որ իր այս գործով անգամ մը եւս ցուցաբերեց իր տաղանդին կենսունակութիւնը:

Արդարեւ Թօսունեան աւելի քան վեց ամիսներ տրամադրած էր այս յուշակոթողին ստեղծման գործին, որ պահանջած էր ծանր ու երկարատեւ աշխատանք:

Այս ստեղծագործութիւնը պրոնզեայ ուղղահայեաց կերտուածք մըն է՝ 180 սմ բարձրութեամբ, 120 սմ լայնքով ու 52 սմ խորութեամբ: Ան կը ներկայացնէ երկփեղկանի դարպաս մը, որ կիսով բաց է՝ իւրաքանչիւր փեղկ խորհրդանշելով երկու ազգերէն մին: Իսկ գործը ամբողջութեամբ կը խորհրդանշէ Եգիպտոսի եւ հայ ժողովուրդներու բարեկամութիւնը, որ երկար դարերու պատմութիւն մը ունենալով հանդերձ, նոր շրջան մը թելակոխեց 15 տարիներ առաջ, երբ հաստատուեցան դիւանագիտական յարաբերութիւններ, Եգիպտոսի ու նորաստեղծ երրորդ Հայկական Հանրապետութեան միջեւ:

Յուշակոթողի վերնամասին կը տեսնենք ալիքաձեւ փայլուն երիզ մը, որ կը միացնէ երկու կիսաբաց փեղկերը, խորհրդանշելով երկու ժողովուրդներուն բարեկամական կապերու յաւերժութիւնը:

Այս առթիւ կը շնորհաւորենք արուեստագետ Սարգիս Թօսունեանը, որ ջանք չխնայեց իր այս գործը լաւագոյն կերպով կատարելու:

Հրանդ Զէշիշեան



Ձախէն՝ տեղոց Վարդան Օսկանեան, Մոհամետ Ապտէլ Ազիմ Ուազիր, Գերշ. Տ. Գրիգոր Եպս. Գուսան եւ տղթ. Ռուբէն Կարապետեան



Ձախէն՝ տիար Անդրանիկ Մեսրոպեան, արուեստագետ Սարգիս Թօսունեան եւ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԲԸՄ-ի ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՊՐՆ. ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ ՇԵՏ

ՀԲԸՄի ժողովրդական Կեդրոնական Վարչական Ժողովի պաշտոնաթերթը «Յուշարար Միութիւն» պարբերականի խմբագրութիւնը, Միութեան 100-ամեակի նախօրեակին նպատակայարմար դատած է, իր Դեկտեմբեր 2005-ի թիւին մէջ, 93-րդ տարի - թիւ 1, հարցազրոյցի ձեւով տեղ տալու Միութեան ծննդավայր Եգիպտոսին:

Հարցազրոյցը կատարուած է ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի երկարամեայ ատենապետ՝ պրն. Պերճ Թերզեանի հետ, որուն դիպուկ պատասխանները կու տան ամփոփ պատկերը եգիպտահայ գաղութի անցեալին ու ներկային, ինչպէս նաեւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի տեղական գործունեութեան:

Նկատի ունենալով որ մեր ընթերցողներէն շատերը առիթ չունին տեսնելու «Յուշարար Միութիւն»ը, ստորեւ կը ներկայացնենք այդ հարցազրոյցը իր շահեկանութեան համար:

«Տ.»

1- Պրն. Պերճ Թերզեան, Միութեանս հարիւրամեակին առիթով բնական էր որ յատուկ ուշադրութեան արժանանար ՀԲԸՄ-ի ծննդավայրը հանդիսացող Եգիպտոսի մեր շրջանակը: Քիչ մը պատմութեան անդրադառնալով ի՞նչ հանգրուաններէն անցած է Եգիպտահայ գաղութը Մեծ Եղեռնէն ետք:

Ձեր հարցումը այնքան ընդգրկուն է, որ անոր ճշգրիտ եւ մանրամասն պատասխանը կրնայ քանի մը հատոր լեցնել: Այսուհանդերձ պիտի փորձեմ կարելի ամփոփումով անդրադառնալ:

Ինչպէս գիտեք Եղեռնէն այս կողմ անցած են աւելի քան 90 տարիներ եւ Ձեր հարցումին պատասխանելու համար, հարկ է անդրադառնալ Եգիպտահայ գաղութի անցեալ 90 տարիներուն մասին:

Եգիպտահայ գաղութը Եղեռնէն շատ առաջ հին եւ կազմակերպուած գաղութ մը եղած է եւ իր ժամանակակից ազգային վարչամեքենայի կառոյցներուն արմատները կ'երթան մինչեւ 19-րդ դարու երեսունական թուականները, երբ Եգիպտահայ համայնքը Երուսաղէմի Պատրիարքութեան ենթակայութիւնէն դուրս գալով անկախ թեմ հռչակուած է եւ իբր այդ, որպէս օսմանեան տարածաշրջանի մէջ գտնուող կրօնական համայնք, կապուած Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան: Այս օրինավիճակը տեւած է մինչեւ համաշխարհային Ա. Պատերազմ, այսինքն Եղեռնի տարիները: Ատկէ յետոյ Եգիպտահայ թեմը ուղղակի կապուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Տեղին է յիշել թէ Եղեռնի տարիներուն Եգիպտոսի մէջ արդէն կը գործէին բազմաթիւ հայկական վարժարաններ, որոնցմէ մեծագոյն եւ կարեւորագոյններն էին Գահիրէի Գալուստեան

Ազգային վարժարանը (հիմնուած 1854-ին) եւ Աղեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանը (հիմնուած 1862-ին):

Գոյութիւն ունէր հայկական մամուլ: Եգիպտահայ թերթերուն առաջնէկը «Արմաւենի»ն լոյս տեսած է Գահիրէի մէջ 1865-ին: Իսկ Աղեքսանդրիոյ մէջ առաջին հայ թերթը լոյս տեսած է 1889-ին:

Եղեռնի տարիներէն սկսեալ ցայսօր, լոյս կը տեսնեն երկու օրաթերթեր, «Արեւ» եւ «Յուսաբեր», երկուքն ալ 1915-էն սկսեալ:

Այս տուեալները կը յիշեմ պարզապէս ցոյց տալու համար, թէ միևնույն տարիներուն, Եգիպտոսի մէջ արդէն գոյութիւն ունէր կազմակերպուած համայնք, իր եկեղեցիներով, իր ազգային կալուածներով եւ վարչամեքենայով, վարժարաններով, մամուլով եւ այլազան բնութիւն գործունեութիւններ ունեցող միութիւններով:

Եգիպտահայ համայնքը մասնաւոր կշիռ կը ստանար նաեւ այն հանգամանքով, որ Մոհամետ Ալիի իշխանութեան սկզբնաւորութիւնէն (1805) եւ ամբողջ 19-րդ դարու ընթացքին բազմաթիւ հայեր գրաւած են կարեւոր պաշտօններ: Կը բաւէ անոնցմէ յիշել միայն ամենէն նշանաւորները, Մոհամետ Ալիի խորհրդական՝ եւ վարչական ու դիւանագիտական գործերուն աջ բազուկը եղող Պօղոս Պէյ Եուսուֆեանը եւ Եգիպտոսի առաջին եւ երկու վարչապետ Նուպար փաշա Նուպարեանը:

Հետեւաբար, բնաւ զարմանալի չէ, որ երբ Մեծ Եղեռնը սկսաւ գործադրուիլ անոր առաջին լուրերը Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն Պուկարիոյ վրայով կը տեղեկացուէին Գահիրէի Ազգային Առաջնորդարանին եւ Եգիպտահայութիւնը իբր կազմակերպուած համայնք իր բոլոր կառոյցներով զօրաշարժի կ'ենթարկուէր հասնե-



լու համար Եղեռնէն ճողոպրած գաղթականներուն եւ որբերուն օգնութեան, Եգիպտոսէն ներս թէ դուրս:

Այս ուղղութեամբ հարկ է նշել այն կարեւոր դերը որ Ա. Յամաշխարհային պատերազմի տարիներուն վիճակուեցաւ Եգիպտահայութեան Մուսա լէրան վեց գիւղերէն ֆրանսական նաւատորմին միջոցաւ Փոր Սայիտ փոխադրուած 4200 գաղթականներուն օժանդակութեան գործին մէջ:

Այս գաղթականներուն յետագային եկան միանալու այլ վայրերէ հասած գաղթականներ: Այսպիսով գաղթականներու ընդհանուր թիւը 1919-ին հասաւ շուրջ 8100 հոգիի, որոնք բոլորը Փոր Սայիտ քաղաքի ասիական ցամաքամասի ափին հիմնուած վրանաքաղաքին մէջ մնացին եւ Եգիպտահայութիւնը իր վրայ վերցուց անոնց հոգածութիւնը:

Վրանաքաղաքը իր դերը կատարեց 17 Սեպտեմբեր 1915-էն մինչեւ Նոյեմբեր 1919, գաղթականներու վերջին խումբին մեկնումի թուականը:

ԶԲԸՄ-ը իր վրան առաւ պատասխանատուութիւնը վրանաքաղաքի «Սիսուան» վարժարանին որ ուներ շուրջ 1250 աշակերտ:

Փոր Սայիտի մէջ ֆրանսացիները սկսան մարզել Մուսա լեռէն եկած երիտասարդները, որոնք յետագային հանդիսացան Արեւելեան կամ Հայկական Լեգէոնին կորիզը:

Ինչպէս գիտեք Հայկական Լեգէոնը կազմուեցաւ Ազգային Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպարի եւ Ֆրանսայի եւ Անգլիոյ ներկայացուցիչներ Ժորժ Փիքոյի եւ Մարկ Սայքսի միջեւ Լոնտոնի մէջ կայացած համաձայնութեան հիմերով, որմէ յետոյ ֆրանսական կառավարութիւնը ռազմական պատուիրակութիւն մը դրկեց Եգիպտոս բանակցելու տեղոյն Թեմական Ժողովին հետ Մուսա լէրան գաւակներուն զօրագրումը իրականացնելու համար, պայմանաւ որ անոնք պատերազմին մասնակցէին միայն սուրիական եւ կիլիկեան ճակատներուն վրայ:

Յետ բանակցութիւններու Թեմական Ժողովը 6 Նոյեմբեր 1916-ին իր հաւանութիւնը տուաւ այս ծրագրին, քանի որ ան կը համընկներ գաղթական երիտասարդութեան սնուցած ազգային երազներուն հետ:

Ֆրանսական կառավարութիւնը երբ սկսաւ զօրագրել Մուսա լէրան երիտասարդութիւնը, առաջին առթիւ 600 հոգի ներկայացան որոնցմէ ֆրանսացիները կազմեցին Լեգէոնին առաջին գումարտակը եւ զայն Կիպրոս փոխադրեցին տեղոյն վրայ մարզուելու համար:

Այս գործընթացին մէջ ֆրանսական կառա-

վարութիւնը 27 Նոյեմբեր 1916-ին Պօղոս Նուպարի հետ կը կնքէր համաձայնութիւն մը կազմելու համար Արեւելեան (յետագային հայկական) Լեգէոնը խոստանալով դաշնակից ուժերու յաղթանակի պարագային, Կիլիկիոյ տալ ինքնավարութիւն ֆրանսական հոգատարութեան տակ:

Լեգէոնը սկսաւ մարզուիլ Կիպրոսի մէջ 1916-էն մինչեւ Մայիս 1918 եւ միացաւ Պաղեստինի ճակատին վրայ Չօրավար Ալէնպիի արշաւանքին եւ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց օսմանեան ուժերու դէմ 19 Սեպտեմբեր 1918-ին Արարայի բարձունքին վրայ:

Ասկէ յետոյ Լեգէոնը դաշնակից ուժերուն հետ մասնակցեցաւ Լիբանանի եւ Սուրիոյ ազատագրումին: 1918 Նոյեմբեր-Դեկտեմբերին Լեգէոնը որուն մարտիկներուն թիւը հասած էր 5000-ի, մտաւ Կիլիկիա եւ սկսաւ մասնակցիլ անոր պաշտպանութեան:

Սակայն, ֆրանսական քաղաքականութեան մէջ եղած շրջադարձին եւ քեմալականներուն հետ ֆրանսացիներուն ունեցած մերձեցումին հետեւանքով, Լեգէոնը ենթարկուեցաւ մասնակի, ապա 1920-ի Օգոստոսին ամբողջական զօրացումի:

Այս կացութեան հետեւող դեպքերը ծանօթ են: Քեմալականները արշաւեցին Կիլիկիա, հայերը մղեցին ինքնապաշտպանութեան գանազան հերոսամարտեր որոնց հետեւեցաւ Ա. Յամաշխարհային պատերազմէն յետոյ Կիլիկիա հաւաքուած հայութեան երկրորդ գաղթականութիւնը դեպի Սուրիա, Լիբանան, Պաղեստին եւ Եգիպտոս:

1921-էն սկսեալ Կիլիկիայէն եկած գաղթականներու նոր ալիքներ սկսան հասնիլ Եգիպտոս: Նոյնպէս, Եգիպտոս բերուեցան որբեր Սուրիայէն եւ Յունաստանէն: Այս շարժումը տեւեց մինչեւ 1927:

Գաղթականներու հոսքին հետ Եգիպտոս իրեն քաշեց մեծ մասով արեւմտահայ եւ որոշ թիւով արեւելահայ մտաւորականներու համաստեղութիւն մը, որ նոր աւիւն եւ նոր դիմագիծ տուաւ գաղութին:

Նորեկ մտաւորականները կրթական տնօրէնի, ուսուցիչի, խմբագրի պաշտօններ ստանձնելով եւ իրենց աշխոյժ մասնակցութիւնը բերելով համայնքին հասարակական կեանքին, ազգային եւ մտաւորական յագեցած լիցք բերին Եգիպտահայութեան:

Այս մտաւորականներու շունչին տակ դաստիարակուած յաջորդական սերունդներն են որ յետագային հայրենիք ներգաղթելով հասան կարեւոր դիրքերու: Իսկ աւելի ուշ անոնցմէ նոր գաղթօճախներու մէջ հաստատուողները իրենց



հետ տարին ազգային ոգի եւ կազմակերպչական աւանդութիւն ու հիմնական դեր ունեցան նոր գաղթօճախներու ազգային դիմագիծի կազմաւորումին մէջ:

Տեղին է յիշել որ անցեալ դարու 20-ական թուականներու կեսէն մինչեւ 50-ականներու սկիզբը սփիւռքահայ երկու կուսակցութիւններու կեդրոնները կը գտնուէին Եգիպտոս, անոնց Եգիպտոսի մամուլը «Արեւ»ը եւ «Յուսաբեր»ը ունէին առաջնորդող դեր ու կը համարուէին իրենց ներկայացուցած կազմակերպութիւններուն խօսափողերը:

Դարձեալ տեղին է նշել որ անցեալ դարու 20-ականներու սկիզբը Բարեգործականի կեդրոնին Եգիպտոսէն Եւրոպա փոխադրուելէն յետոյ մինչեւ նոյն դարու 50-ականներու սկիզբը, ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովին իրաւասութեան մէջ կ'իյնային բացի Եգիպտոսէն, Պաղեստինը, Լիբանանը եւ Սուրիան:

Եգիպտահայ գաղութը իր մտաւորական, տնտեսական եւ թուական բարձրակետերը հասած էր Բ. Զամաշխարհային պատերազմի աւարտին, որմէ յետոյ դէպի հայրենիք սկսած ներգաղթը, 1952-ի Եգիպտոսի յեղափոխութեան յաջորդող հողային բարեկարգութեան օրէնքները, երկրին տնտեսութեան նախ, 1956-ին եգիպտականացումը յետոյ, 1961-ին ազգայնացումը եւ անոնց առընթեր ընկերվարական գաղափարախօսութեան որդեգրումը պատճառ դարձան եգիպտահայութեան արտագաղթին:

Յատկանշական է, որ անցեալ դարու 20-ականներէն սկսեալ մինչեւ 60-ականները եգիպտահայութիւնը հիմնեց բազմաթիւ նոր եկեղեցիներ, դպրոցաշէնքեր, ակումբներու նոր հաւաքավայրեր եւ ունեցաւ ընդհանրապէս բարգաւաճ կեանք մը:

Եգիպտահայ կեանքը կարելի է ըսել որ 1961-էն սկսեալ մինչեւ 1980 մտաւ «ձմեռնաքուն»-ի մէջ: Անցեալ դարու 80-ականներէն սկսեալ պետութեան տնտեսական քաղաքականութեան փոփոխութեան հետեւանքով, դիւրութիւններ ստեղծուած են: Բոլոր հին կառոյցները որ գոյութիւն ունէին ներկայիս աւելի հեշտօրէն գործելու կարելիութիւններ ունին: Դժբախտաբար գաղութին նօսրացումին հետեւանքով ազգային գործերու մէջ կը պակսի մարդուժը:

Երիտասարդութեան մեծամասնութիւնը հետաքրքրուած չէ ազգային գործերով եւ ներգրաւուած չէ ազգային կեանքի մէջ: Զայերէն լեզուն զգալիօրէն նահանջի մէջ է:

Ասոնց կողքին կայ սակայն գօտեպնդիչ երեւոյթ մը: 1975-էն ի վեր Եգիպտոսի հայկական աւանդական կազմակերպութիւնները, համոզուած ըլլալով որ ներքին պայքարները պերճանք մըն են մեր փոքրաթիւ համայնքին համար, փոխադարձ համաձայնութեամբ ազգային վարչամեքենան Գահիրէի թէ Աղեքսանդրիոյ մէջ միասնաբար կը վարեն համերաշխօրէն եւ խաղաղօրէն:

Այս դրութեան թերեւս միակ անպատեհութիւնը այն է, որ ազգային իշխանութիւններուն մէջ բոլոր կողմերը ներկայացուած ըլլալով, անոնք ենթակայ չեն մամուլէն ակնկալուած հետեւողական ուշադրութեան եւ հակակշռին:

2- Ինչպիսի անդրադարձ ունեցած է գաղութի վրայ այն փաստի առկայութիւնը թէ Պօղոս Նուպար կամ Բարեգործականի հիմնադիրներէն շատեր ապրած ու գործած են Եգիպտոսի մէջ:

Պօղոս Նուպարը ԶԲԸՄ-ի հիմնադիրը ըլլալէն զատ, եղած է եգիպտահայ Ազգային Իշխանութեան գլխաւոր առաջնորդներէն: Ան անկախաբար ԶԲԸՄ-էն, եգիպտահայութեան մեծագոյն բարերարներէն է: Պօղոս Նուպարը Եգիպտոսէ դուրս եւս ըրած է բազմաթիւ բարեսիրութիւններ հայրենիքի թէ արտասահմանի մէջ: Սակայն, Պօղոս Նուպարը միակ բարերարը չէ: ԶԲԸՄ-ի հիմնադիրներէն Գրիգոր Եղիայեանը եւս եգիպտահայութեան մեծագոյն բարերարներէն է: Իր ձգած կտակին շնորհիւ Գահիրէի մէջ 1928-ին շինուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ փառակերտ տաճարը եւ իր ձգած կտակով շուրջ 80 տարիներէ ի վեր եգիպտահայ յաջորդական սերունդներ իրենց բարձրագոյն ուսումը ստացած են եւ կը ստանան:

Եգիպտահայ մեծ եւ կարեւոր բարերարներ հանդիսացած են Պօղոս Պէյ Եուսուֆը եւ Աղա Կարապետ Գալուստը որոնց հիմնած կրթական յարկերը մեծագոյն բարիքը եղած են եգիպտահայութեան:

Սակայն, վերադառնալով Պօղոս Նուպարին հարկ է շեշտել թէ ԶԲԸՄ-ի միջոցաւ կատարած իր բարերարութիւնները վարակիչ օրինակ դարձած են այլ եգիպտահայերու:

Այսպէս, կարելի է յիշել Մելգոնեան եղբայրները, որոնց ԶԲԸՄ-ի կատարած նուիրատուութիւնը մեծ օգուտ բերած է համայն հայութեան:

Կարելի է յիշել Լեւոն Պէյ Յակոբեան ընտանիքը որուն նուիրատուութեամբ ԶԲԸՄ-ը թէ հայրենիքի մէջ մայրանոց շինած է եւ թէ հիմնած Պէյրութի մէջ Դարուհի Յակոբեան վարժարանը:



Նոյնը կարելի է ըսել նաև Պեյրուֆի Յովակիմեան Մանուկեան վարժարանին համար որուն բարերարը դարձեալ կապ ունի եգիպտահայութեան հետ:

Տրուած օրինակները կը վերաբերին մեծ եւ կարեւոր նուիրատուութիւններու: Պօղոս Նուպարի օրինակը վարակիչ եղած է բազմաթիւ այլ եգիպտահայերու եւս որոնք տարբեր ժամանակներու եւ տարբեր տարողութեամբ նուիրատուութիւններ կատարելով ՀԲԸՄ-ի միջոցաւ օգտակար հանդիսացած են հայութեան:

Իշխանական նուիրատուութիւններուն շարքին վերջին օրինակն է 1976-ին եգիպտահայ մեծ բարերարուհի Սաթենիկ Ճ. Չագըրի ՀԲԸՄ-ի կատարած նուիրատուութիւնը, որուն բարիքները եգիպտոսէն ներս թէ դուրս աւելի քան տասը տարիէ ի վեր կը սփռուին:

Պօղոս Նուպարի ոգին ժառանգական է եւ հաւաքական նպատակներու օգտակար ըլլալու փափաքը միշտ առկայ է եգիպտահայութեան մէջ:

3- Ի՞նչ է եգիպտահայութեան ներկայ կացութիւնը. ի՞նչ գործունեութիւններ կը ծաւալէ ՀԲԸՄ-ի տեղական մասնաճիւղը գաղութէն ներս:

Ինչպէս նախապէս ըսուեցաւ եգիպտահայութիւնը փոքրաթիւ է, սակայն նախանձախնդրութեամբ կը պահէ հինէն եկած իր բոլոր կառոյցները:

Եգիպտոսի մէջ այսօր կը գործեն երեք ազգային վարժարաններ, երկուքը Գահիրէ եւ մէկը Աղեքսանդրիա:

Գահիրէի մէջ լոյս կը տեսնեն «Արեւ» եւ «Յուսաբեր» օրաթերթերը, «Ջահակիր» երկշաբաթաթերթը, «Արեւ» օրաթերթի ամսօրեայ արաբերէն յաւելումը, ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» եռամսեայ պարբերաթերթը, «Ջահակիր»-ի յաւելումը «Ծիծեռնակ» եռամսեայ երաժշտագիտական պարբերաթերթը:

Եգիպտահայ մամուլի վեցանոյս ընտանիքին, այս տարի եկաւ միանալու արաբերէն լեզուով լոյս տեսնող ՀՀ-ի Գահիրէի Դեսպանատան «Ախպար Արմինիա» եռամսեայ լրատուն, որու առաջին թիւը (Յուն. Փետ. Մարտ) լոյս տեսաւ անցեալ Մարտին:

1954-էն ի վեր եգիպտական պետական ռատիոկայանէն կը գործէ «Հայկական ժամ»ը ներկայիս օրական մէկ ժամ ձայնասփռումով:

Գոյութիւն ունին հինգ մարզական ակումբներ: Տասնեակ մը մշակութային եւ բարեսիրական միութիւններ:

ՀԲԸՄ-ի տեղական մասնաճիւղը (Գահիրէ) շնորհիւ իր ունեցած ՀԲԸՄ-ի Սաթենիկ Ճ. Չագըրի Հիմնադրամին կը ծաւալէ ընդարձակ բարեսիրական եւ մշակութային գործունեութիւն:

Բարեսիրական ծիրէն ներս ՀԲԸՄ-ի Սաթենիկ Ճ. Չագըրի Հիմնադրամը, կենսաթոշակ կը յատկացնէ կամ դարմանումի ծախսերը կը հոգայ միջոցներէ զուրկ ազգայիններու:

Առողջապահական հոգատարութեան ծրագրով մը, կ'օժանդակէ ծրագրին անդամագրուող անհատներուն:

Կարեւոր գումարներով կրթաթոշակներ կը յատկացնէ, թէ կարիքաւոր եւ թէ գերազանցիկ աշակերտներու, որպէսզի իրենց ուսումը շարունակեն բարձրագոյն ուսման հիմնարկներու մէջ:

Լրացուցիչ կենսաթոշակ կը յատկացնէ եգիպտահայ ազգային վարժարաններու մէջ 25 տարի եւ աւելի պաշտօնավարած եւ հանգրստեան կոչուած հայագիտական նիւթերու ուսուցիչներուն:

Ըստ կարիքի եւ յետ ուսումնասիրութեան օժանդակութիւններ կը յատկացնէ բարեսիրական եւ մշակութային այլ միութիւններու:

Իսկ մշակութային գետնի վրայ, կը կատարէ հրատարակութիւններ (տասը տարուան ընթացքին 65 մեծ ու փոքր հատորներ):

Գիրքեր կը նուիրէ գրադարաններու եւ հայրենի համալսարաններու:

Նիւթապէս կը սատարէ արաբերէն լեզուով լոյս տեսնող «Արեւ»-ի ամսօրեայ յաւելումին:

Ուսումնասիրական պարապմունքի փոխարէն յատկացումներ կը կատարէ հեղինակներու:

Հայրենիքէն եւ արտասահմանէն հայ արուեստագետներ եւ դասախօսներ կը հրաւիրէ Եգիպտոսի մէջ ելոյթներ ունենալու:

Մանրաժապաւենի վրայ կատարած է եգիպտահայ մամուլի ցարդ լոյս տեսնող երեք օրկաններուն հաւաքածոներուն նկարահանումը սկիզբէն մինչեւ 2000 թուականը, որմէ պատճեններ ղրկուած են հայրենիք եւ Փարիզի Նուպարեան մատենադարանին:

Աւարտական տարիներու (վարժարան կամ համալսարան) աշակերտներուն կը կատարէ քաջալերական յատկացումներ:

Շարքը տակաւին երկար է, քանի որ ըստ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ծրագիր կանոնագրին քսանէ աւելի մարզերու մէջ կարելի է յատկացումներ կատարել: Հոս թուեցի այն ինչ որ կը յիշեմ: Կը յուսամ որ այսքանը արդէն ընդհանուր գաղափար մը կու տայ կատարուած գործին մասին:

Կը յուսամ որ այսքանը արդէն ընդհանուր գաղափար մը կու տայ կատարուած գործին մասին:

Կը յուսամ որ այսքանը արդէն ընդհանուր գաղափար մը կու տայ կատարուած գործին մասին:

4- Ի՞նչ ծրագիրներ կը մշակէք գաղութի երիտասարդները ներգրաւելու ազգա-



յին կեանքին մէջ:

Կը կարծեմ որ մեր բոլոր գաղթածախներուն՝ արեւմուտքի մէջ թէ արեւելքի ամենէն այժմեական եւ ամենէն փշոտ հարցն է երիտասարդները ազգային կեանքի մէջ ներգրաւելու հարցը:

Աւանդական միջոցները որոնք կրնային ասկէ 50 կամ 60 տարի առաջ արդիւնք տալ, այսօր ժամանակավրէպ են:

Անցեալին մեր համայնքները գրեթէ ամբողջութեամբ «կէթո»ի մօտեցող գոց ընկերութիւններ էին: Այսօր, երիտասարդ նոր սերունդները բնականօրէն աւելի բաց ընկերութեան մէջ կ'ապրին եւ եթէ չունենան ազգային զօրաւոր դաստիարակութիւն եւ զգացում, շատ դիւրութեամբ եւ հեզասահօրէն կը խզուին ազգային կեանքէն:

Այս պայմաններուն մէջ հայրենիքը պէտք է վերածել մնայուն նպատակակետի:

Հարկ է որ մեր նոր սերունդը պատանի թէ երիտասարդ յաճախ այցելէ հայրենիք, բայց ոչ որպէս զբօսաշրջիկ, այլ կազմակերպուած ծրագիրներու մասնակցելու, մասնագետներու հանդիպելով Հայաստանի պատմամշակութային յուշարձաններուն լրջօրէն ծանօթանալու, շինարարական աշխատանքներու մասնակցելու, տարբեր ձեռնարկութիւններու մէջ աշխատելու, գիւղական շրջաններու բնակչութեան հետ շփումներ ունենալու:

Անշուշտ այս նպատակները իրագործող հայկական կազմակերպութիւններ գոյութիւն ունին որոնք որոշ չափով այս կամ այն մարզին մէջ կ'իրագործեն յիշուած գործունեութիւնները:

Բայց անոնց գործունեութիւններուն մասնակցողներուն թիւը շատ նօսր է, բաղդատած արտասահմանի հայ երիտասարդութեան թիւին:

Այս նպատակը, այսինքն երիտասարդութիւնը հայրենիքին կապելը, հարկ է որ ունենայ համազգային առաջնահերթութիւն եւ անոր համար չինսայուին միջոցները, որովհետեւ մեր հայրենիքին ամենէն մեծ եւ անչափելի վնասը պիտի հասնի, եթէ այսօրուան երիտասարդութիւնը ՎԱՂԸ կապ չունենայ հայրենիքին հետ եւ խզուի անկէ:

Հիմա կրնաք հարց տալ թէ որպէս պատասխանատուներ մենք ի՞նչ ըրած ենք Եգիպտոսի մէջ եւ ի՞նչ կ'ընենք յիշած հարցերուս առընչութեամբ:

Նախ ըսեմ որ մեր գաղութին թիւը փոքր է եւ անոր համար Գահիրէի ՀԲԸՄ-ը գոնէ երեք անգամ փորձած է որ երիտասարդներ միանան այլ համայնքներէ հայրենիք մեկնող աւելի ստուա-

րաթիւ երիտասարդական խումբերու:

Սակայն, արդիւնքը միշտ չէ որ իտեալական եղած է: Կը կարծեմ որ ՀԲԸՄ-ը հարկ է որ վերակազմակերպէ երիտասարդական հարցերով զբաղող իր կեդրոնական վարչակառուցը եւ կանոնաւոր կերպով ամէն տարի բոլոր իր մասնաճիւղերէն կազմուած մասնակիցներով խումբեր դրկէ հայրենիք եւ չբաւականանանք ամէն մէկ գաղութի մէջ տարուած ինքնագլուխ աշխատանքներով:

Անշուշտ շատ աւելի լաւ պիտի ըլլար եթէ հայրենիքը կարելիութիւն ունենար այս ծրագիրը ընդարձակ տարողութեամբ իրագործելու յառաջիկայ տարիներուն:

5- Միջին Արեւելեան այլ գաղութներու ՀԲԸՄիութեան մասնաճիւղերուն հետ ինչպիսի՞ յարաբերութիւններ կը մշակէք:

Վերջին տասնամեակին փոխյարաբերութիւնները աւելի աշխուժացած էին: Եթէ պայմանները թոյլատրեն այդ աշխուժութիւնը կարելի է տարածել:

Տուեալ շրջանին փոխյարաբերութիւններ եղան առաւելաբար Հալէպի եւ որոշ չափով Պէյրութի ՀԲԸՄ-ՅԵԸ-երուն հետ:

Հալէպի հետ եղած են պասքէթպոլի տղոց եւ աղջկանց խումբերու փոխադարձ այցելութիւններ: Եգիպտոսէն մասնակցութիւն եղած է ԶԷ-սապի մէջ սկաուտական բանակումներու, իսկ Պէյրութի հետ եղած են սկաուտական փոխ այցելութիւններ:

6- Իբր ՀԲԸՄ-ի ծննդավայր մասնաճիւղի ատենապետ, ի՞նչ պիտի ուզէիք ըսած ըլլալ ՀԲԸՄիութեան աշխարհասփիւռ անդամներուն:

Պատգամներ տալու յաւակնութիւններ չունիմ: Միայն կրնամ ըսել որ հայկական կազմակերպութիւններու մէջ ազգային մտահոգութիւններով աշխատող իւրաքանչիւր պատասխանատուի սրտագին փափաքն է, իր կարելիութիւններուն սահմանին մէջ օգտակար ըլլալ իր ժողովուրդին, սկսելով իր անմիջական շրջապատէն հասնելու համար մինչեւ հայրենիք: Երանի ՀԲԸՄ-ի ամէն պատասխանատու, պարզ անդամ կամ համակիր այդ ըմբռնումը որդէգրէ, զարգացնէ եւ փոխանցէ իր հայրենակիցներուն:



ՀԲԸՄ-Ի ՇԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՒ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆՑ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԸԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱՆ, ԱՊՐԻԼ 2-8, 2007

Պերճ Սեդրակեան. ՀԲԸՄ-ը նոր հարիւրամեակի սեմին պիտի շարունակէ տէր ըլլալ իր պատասխանատուութիւններուն եւ իր ամբողջական նուիրաբերումը բերել յօգուտ մեր ազգին ու հայրենքին:

ՀԲԸՄ-ի ու թեան 100-ամեակը անցնող տարուան ընթացքին նշուած էր փառաշուք հանդիսութիւններով եւ տօնակատարութիւններով, որոնք սկիզբ առած էին Գահիրէի մէջ, ուր 1906-ին Միութեան լուսահոգի հիմնադիրները հայութեան նուիրաբերած էին մեր ժողովուրդի 20-րդ դարու պատմութեան ընթացքին նախահնամական դերակատարութիւն ունեցած կազմակերպութիւն մը: 100-ամեակի յօբելէական հանդիսութիւնները եզրափակուեցան Երեւանի մէջ, Ապրիլ 2-8, 2007-ին:

Արդարեւ, ՀԲԸՄ-ի տօնակատարութեան նախագահ Պերճ Սեդրակեանի գլխաւորութեամբ Կեդրոնական Վարչական Ժողովի, Հոգաբարձուներու Խորհուրդի, Միութեան մասնաճիւղերու ատենապետներու, վարչական անձնակազմի եւ անդամներու, շուրջ 150 հոգի հոգի խումբը մասնակից դարձաւ յօբելէական եզրափակիչ փոփոխութիւնի ձեռնարկներուն:

Ապրիլ 2-ին ՀԲԸՄ-ի անդամներ մեկնեցան Արցախ՝ տեղւոյն վրայ ծանօթանալու Միութեան նիւթական յատկացումներով ընթացող Ղարաբաղի Վերակառուցում ծրագիրին Հաղործի շրջանի Նորաշէն, Բարեշէն եւ Ջրակն գիւղերուն մէջ: Միութեան անդամները Ստեփանակերտի Ալեք Մանուկեան փողոցին վրայ գտնուող մեծ բարերարին յուշարձանին առջեւ ծաղկեպսակ



Արցախ այցելութեան ընթացքին

զետեղեցին: Անոնք հանդիպումներ ունեցան նաեւ Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններուն հետ, ինչպէս նաեւ ներկայ գըտնուեցան ՀԲԸՄ-ի կողմէ հովանաւորուող Ղարաբաղի Սենեկային Նուագախումբի համերգին:

Ապրիլ 4-ին Երեւանի «Մարիոթ Արմենիա» պանդոկի Տիգրան Մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ բարի գալուստի ընթացք մը: Յաջորդ օրը, նոյն պանդոկին մէջ, 100-ամեակի ժողովներուն մասնակիցներ դիտեցին դարադարձի յօբելէական նուիրած ցուցահանդէսը, ուր ցուցադրուած էին Միութեան հիմնադրութեան եւ մասնաճիւղերու գործունեութեան վերաբերող իրեր, պատմական լուսանկարներ, յուշանուէրներ, քարոզչական հրատարակութիւններ եւ տպագիր այլ նիւթեր:

Ցուցահանդէսին յաջորդեցին ժողովի աշխատանքային նիստերը, որոնց ընթացքին Միութեան Երիտասարդ Արհեստավարժներ, մասնաճիւղերու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ քննարկեցին Միութեան Երիտասարդ Արհեստավարժներու գործունեութեան հետ առընչուող հարցեր: Ժողովներուն աշխատանքներուն չմասնակցող հիւրեր առիթ ունեցան այս եւ յաջորդող օրերուն այցելելու Սեւանայ լիճ, Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոց, Գառնի եւ Գեղարդ: Ընդ 15 երկիրներէ ժամանած ՀԲԸՄ-ի անդամներ այցելեցին նաեւ Նուպարաշէն Աւան, ուր ծաղկեպսակ զետեղեցին ՀԲԸՄ-ի հիմնադիր-նախագահ եւ Նու-



Միութեան անդամները Ստեփանակերտի Ալեք Մանուկեան փողոցին վրայ գտնուող մեծ բարերարին յուշարձանին առջեւ ծաղկեպսակ զետեղելու պահուն

պարաշենի կառուցման բարերար Պողոս Նուպար Փաշայի կիսանդրին առջեւ: ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամները յայտարարեցին թե պիտի ստանձնեն Նուպարաշենի Մշակույթի Կեդրոնի վերակառուցման ծրագիրը: Նոյն օրը երեկոյեան միութեան անդամներ այցելեցին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի՝ մասնակցելու Ունիւուայի կարգին:



Պողոս Նուպար Փաշայի կիսանդրին Նուպարաշենի մէջ

Ուրբաթ, 6 Ապրիլին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Գործարարութեան Կեդրոնի շէնքին մէջ, ուր կը գտնուին նաեւ ԶԲԸՄ-ի Երեւանի Ներկայացուցչութեան գրասենեակները, տեղի ունեցաւ կրթական հարցերու նուիրուած ժողով մը: ԶԲԸՄ-ի կրթական հարցերու Տնօրէն Արթուր Յամալեան եւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Զերուկ Աւլանեան ներկայացուցին ԶԲԸՄ-ի կրթական ծրագիրները եւ նոր նախաձեռնութիւնները: Լուսապաստառի վրայ ցուցադրուեցան Միութեան վարժարաններու ցանցի աշակերտութեան թիւի եւ վարժարաններուն կատարուած նիւթական յատկացումներու վիճակագրական տուեալներ եւ աղիւսակներ: ԶԲԸՄ-ի Միլիքոն Վելիի մասնաճիւղի ատենապետ Երուանդ Զօրեան ներկայացուց Երեւանի Պետական Համալսարանի համապատասխան մասնագետներու հետ համագործակցաբար պատրաստուած հայերէնի ուսուցման էլեկտրոնային եւ համացանցային (On-line) հեռակայ դպրոցի (Virtual) ծրագիր մը: Ուսուցումը պիտի կատարուի հայերէն լեզուի երկու ճիւղերով՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն ինչպէս նաեւ այլ չորս լեզուներով՝ անգլերէն, ռուսերէն, սպաներէն եւ ֆրանսերէն: Ամերիկեան Համալսարանի Նախագահ Յարութիւն Արմենեան խօսեցաւ համալսարանի գործունեութեան եւ յետագայ ծրագիրներու մասին: Կրթական հարցերու վերաբերեալ տեղի ունեցած



Միութեան Երիտասարդ Արհեստավարժներու խումբը

միտքերու փոխանակումէն ետք եզրափակիչ խօսք ըսաւ ԶԲԸՄ-ի Նախագահ Պերճ Սեդրակեան, որ շեշտեց թէ Միութիւնը յանձնառու կը մնայ կրթական ծրագիրներու հետապնդման՝ միշտ նոր պահանջներու ու մարտահրաւերներու դիմագրուման, ինչպէս նաեւ Սփիւռքի մէջ հայկական ինքնութեան պահպանման նպատակասելեռումով: ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ այցելեցին Նոր Նորք արուարձան, ուր կը գտնուի Միութեան ձեռք ձգած հողատարածքը: Միութեան պատասխանատուները յայտարարեցին, թէ սփիւռքահայ երիտասարդութեան համար Մելգոնեան վարժարան-համալիր մը կառուցանելու նպատակով շուտով հոն կը սկսին շինարարական աշխատանքները: ԶԲԸՄ-ի մասնաճիւղերու անդամները եւ Երիտասարդ Արհեստավարժները ներկայացուցին իրենց միջեւ տեղի ունեցած հանդիպումներուն արդիւնքները եւ յառաջիկային կատարելիք քայլերը: Նոյն օրը, յետմիջօրէին, ԶԲԸՄիութեան անդամներ բարձրացան Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք մատուցանելու Մեծ Եղեռնի անմեղ զոհերու յիշատակին եւ ծաղկեպսակ գետեղելու յուշարձանին առջեւ:

ԶԲԸՄիութեան Նախագահ Պերճ Սեդրակեան, ընկերակցութեամբ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու, ընդունուեցաւ Հայաստանի Նախագահ Ռոպերթ Բոչարեանի կողմէ: Նախագահ Բոչարեան շնորհաւորելով Միութեան 100-ամեակը, ինչպէս նաեւ գնահատելով Միութեան անուրանալի ներդրումը հայ պահպանութեան գործին մէջ, այս առթիւ Միութեան Հերացիի մետալով պարգեւատրեց ԶԲԸՄիութեան Հոգաբարձուներու Խորհուրդի անդամներ եւ բարերարներ Սարգիս Տէմիրճեանը, Գառնիկ Եագուպեանը եւ Նազար Նազարեանը:

Շաբաթ, Ապրիլ 7, 2007-ին, Հայաստանի



Հանրապետության Գիտություններու Ազգային Ակադեմիայի նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցաւ ԶԲԸՄ-ի 100-ամեայ պատմութեան նուիրուած գիտաժողով, որուն բացումը կատարեց Ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսեան: Այս առթիւ, Ակադեմիայի նախագահութեան որոշումով, ԶԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեանին շնորհուեցաւ Ակադեմիայի Պատուաւոր Դոկտորի կոչում:



ԶԲԸՄ-ի ժամանակապատիճի (որ պիտի բացուի 2106-ին ԶԲԸՄ-ի 200-ամեակին) թաղման ընթացքին, Ս. Էջմիածնի շրջաբակին մէջ

ԶԲԸՄիութեան ծննդոցին, հիմնադիրներու հեռատեսութեան, կազմակերպութեան համահայկական բնոյթին, անոր պատմական անցեալին, ազգաշահ նախաձեռնութիւններուն, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ իրագործած ազգապահպան, բարեսիրական, ընկերային, կրթական, մշակութային եւ երիտասարդական գործունեութեան գիտական արժեւորումը կատարեցին ԶԲԸՄ-ի պատմութեան նուիրուած գիրքի հեղինակ Էդուարդ Մելքոնեան, ԶԲԸՄ-ի Փարիզի Նուպարեան գրադարանի տնօրէն Յարութիւն Գեորգեան, Պօղոս Նուպար Փաշային նուիրուած գիրքի հեղինակ Սամուէլ Պօղոսեան եւ ԶԲԸՄ-ի Երեւանի Ներկայացուցչութեան Տնօրէն Աշոտ Ղազարեան: Գիտաժողովի երկրորդ նիստը «Կլոր սեղան»-ի դրութեամբ վարեց Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի Տնօրէն Աշոտ Մելքոնեան: Տեղի ունեցաւ քննարկում ԶԲԸՄի անցեալի եւ ապագայ գործունեութեան հարցերուն շուրջ: Ելոյթ ունեցան արեւելագետ Դոկտ. Փրոֆ. եւ Ակադեմիայի թղթակից անդամ Նիկոլայ Յովհաննիսեան, Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեան, Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆաքիւլտէթի դասախօս Պետրոս Յովհաննիսեան, Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Տնօրէն Ռուբէն Սաֆրաստեան, Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆաքիւլտէթի հայոց պատմութեան ամբիոնի վարիչ եւ Ակադեմիայի թղթակից անդամ Բարգէն Յարութիւնեան, Երուանդ Չօբեան (Միացեալ Նահանգներ) եւ Պերճ Թերզեան (Եգիպտոս): Անոնք շէտեցին համաշխարհայնացման եւ հայ աշխարհի մէջ նկատուող նոր իրողութիւններու, տեղաշարժերու ու մարտահրաւերներու ընդառաջ՝ նոր գործելակերպի որդեգրման, հայեցի դաստիարակութեան եւ արեւմտահայերէնի պահպանման

անհրաժեշտութիւնը:

Շնորհակալութիւն յայտնելով Ակադեմիային գիտաժողովը կազմակերպելուն համար, ԶԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան յիշեցուց, թէ ինչպէս 100 տարի առաջ, նոր հարիւրամեակի սեմին նոյնպէս, Բարեգործականը լուրջ մարտահրաւերներու առջեւ կը գտնուի՝ ինքնութեան պահպանման, հայեցի դաստիարակութեան եւ հայ գանգուած-

ներու կարիքներուն հասնելու աճող պահանջներով: Ան հաւաստիացուց թէ Միութիւնը պիտի շարունակէ իր առաքելութիւնը Սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Նախագահ Սեդրակեան համախմբուելու եւ միասնական ճիգերով գործելու կոչ ուղղեց Սփիւռքի մէջ գործող բոլոր կազմակերպութիւններուն եւ բարեսիրական հաստատութիւններուն: Ակադեմիային մէջ կայացած գիտաժողովի բանախօսութիւնները յետագային պիտի հրատարակուին առանձին գրքոյկով մը:

Անոնք որոնք չէին մասնակցած գիտաժողովին, առիթ ունեցած էին ծանօթանալու ԶԲԸՄ-ի՝ Երեւանի մէջ իրագործած ծրագիրներուն, որոնցմէ գլխաւորներն են Երեւանի Ամերիկեան Համալսարանը, անդրձայնային (Ultrasound) ուսուցողական բժշկական կեդրոնը, ԶԲԸՄ-ի ճաշարանը, Նոր Նորքի Հայորդեաց Տունը, ուր տեղի ունեցած էր տան սաներու եւ ԶԲԸՄ-ի Հալէպի «Անդրանիկ» պարախումբի համատեղ ելոյթը: Նոյն օրը երեկոյեան, Երեւանի «Նոր Ձորաբերդ» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ ճոխ ընթրիք մը:

Կիրակի, Սուրբ Յարութեան տօնին առիթով, ԶԲԸՄ-ի հիւրերը մեկնեցան Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ մասնակցելու ԶԲԸՄ-ի հրաշափառ Յարութեան տօնի առիթով մատուցուող Հայրապետական Սուրբ Պատարագի հոգեպարար արարողութեան: Պատարագի աւարտին յոբելենական տօնակատարութեանց մասնակիցները ներկայ գտնուեցան Վեհարանին մէջ կազմակերպուած տօնական ընդունելութեան, որմէ ետք Վեհարանին շրջաբակին մէջ տեղի ունեցաւ ժամանակապատիճի թաղման յատուկ արարողութիւն Վեհափառ Հօր հանդիսապետութեամբ: ԶԲԸՄ-ի անդամներ այդ ժամանա-



ՀԲԸՄ-ի 100-ամեակի հանդիսություններուն մասնակիցները
Վեհափառ Հայրապետին հետ Էջմիածնի վեհարանին առջև

կապատիճին մէջ գետեղեցին իրեր ու հրատարակութիւններ՝ ի յիշատակ գալոց սերունդներուն:

Նոյն օրը երեկոյեան, Երեւանի Ալեքսանտր Սպենդիարեանի անուան Օբերայի եւ Պալէի Ազգային Ակադեմական Թատրոնին մէջ տեղի ունեցաւ ՀԲԸՄիութեան 100-ամեակին նուիրած հանդիսութիւն, որուն ներկայ գտնուեցան Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոս, Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան, ԼՂՀ նախագահ Արկարդի Ղուկասեան, բարձրաստիճան պաշտօնատար անձինք, Հայաստանի մէջ հաւատարմագրուած դիւանագետներ, ինչպէս նաեւ հարիւրաւոր հրաւիրեալներ: Հայրապետական օրհնութեան եւ 100-ամեակի շնորհաւորանքի իր խօսքը բերաւ Գարեգին Բ. Կաթողիկոսը: Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի շնորհաւորական ուղերձը արտասանեց Արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ յայտնեց թէ նախագահին ուղերձը կ'ընթերցէ ոչ միայն իբրեւ արտաքին գործոց նախարար, այլ՝ ՀԲԸՄ-ի Հալեայի Լ. Նաճարեան-Գ. Կիւլպէնկեան վարժարանի շրջանաւարտ: ՀԲԸՄ-ի 100-ամեակը շնորհաւորեց նաեւ ԼՂՀ նախագահ Արկարդի Ղուկասեան: Ապա ելոյթ ունեցաւ Միութեան նախագահ Պերճ Սեդրակեան, որ անգամ մը եւս շեշտեց թէ՛ «ՀԲԸՄ-ը նոր հարիւրամեակի սեմին պիտի շարունակէ տէր ըլլալ իր պատասխանատուութիւններուն եւ իր ամբողջական նուիրաբերումը բերել յօգուտ մեր ազգին ու հայրենքին»: Գործադրուեցաւ գե-

ղարուեստական բարձր մակարդակի յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ՀԲԸՄ-ի եւ Ս. Էջմիածնի Նորքի Հայորդեաց Տան գեղարուեստական պատանեկան խումբերը, Շողակաթ երգչախումբը, Գեորգեան Ճեմարանի եւ Վազգէնեան Դպրանոցի միացեալ երգչախումբը, Հայաստանի Ֆիլիարմոնիկ Նուագախումբը եւ «Բարեկամութիւն» պարախումբը: Հնչեց նաեւ երգահան Ռոպէրթ Ամիրխանեանի «Ձօն՝ ՀԲԸՄ-ի 100-ամեակին» ստեղծագործութիւնը:

Համերգի աւարտին օբերայի նախասրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն մասնակցեցան մեծ թիւով հայրենի պետական անձնաւորութիւններ, մտաւորականներ, արուեստագետներ, ՀԲԸՄիութեան անդամներ եւ Միութեան հարիւրաւոր բարեկամներ:

Երկուշաբթի, 8 Ապրիլին, Միութեան նախագահ Պերճ Սեդրակեան, ընկերակցութեամբ Միութեան Երեւանի Ներկայացուցչութեան Տնօրէն Աշոտ Ղազարեանի, ընդունուեցաւ վարչապետ Սերժ Սարգսեանի կողմէ: Հայաստանեան մամուլը եւ հեռատեսիլի կայանները լայնօրէն անդրադարձան ՀԲԸՄ-ի հարիւրամեակի ձեռնարկներուն:

ՀԲԸՄիութեան մնայուն կարգախօսը եղած է «Միութիւնը զօրութիւն է», եւ այդ կարգախօսով ալ ան մէկ դարէ ի վեր կը ծառայէ հայ ժողովուրդին՝ Սփիւռքի թէ Հայաստանի մէջ:

Յովիկ Էօրտէքեան
(Երեւան)



ՀԲԸՄ-Ի ԱՂԵՔՍԱՆՈՒԹՅՈՅ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՅՈՒԲԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՆՆԵՐՈՒ Բ. ՁԵՌՆԱՐԿ

Բարեգործական անդրանիկ մասնաճիղ՝ ՀԲԸՄ-ի հիմնադրութեան յոբելեական հանդիսություններուն Բ. ձեռնարկը տեղի ունեցաւ Ուրբաթ, 16 Մարտ 2007-ի երեկոյեան ժամը 7.30-ին Պողոսեան Ազգային Վարժարանի «Մելգոնեան» հանդիսասրահին մէջ:



Օր. Մարի Մազլումեան ելոյթի պահուն

Ձեռնարկին ընթացքին մեծ պաստառի վրայ ցուցադրուեցաւ «Թայմ» շաբաթաթերթի երուպական հրատարակութեան հայոց ցեղասպանութեան մասին «հատուցում» խորագրով վաւերագրական ժապաւենը, պատրաստուած ֆրանսացի հանրաճանաչ բեմադրիչ Լորան ժուրտանի կողմէ, որ կը բովանդակէր Նաեւ հռչակաւոր պատմաբան Իվ Թերնոնի հետ հարցազրոյց մը:

Հանդիսութեան ներկայ էին Աղեքսանդրիոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գրիգոր քիւյ. Սուրբատեան, Պատկ. Թեմական ժողովի ատենապետ տիար Լեւոն Գաղթացեան, Պատ. Զաղաքական ժողովի ատենապետ տիար Վահէ Պէսոհանեան եւ տիկինը, հայ կաթողիկէ խորհուրդի անդամ տոքթ. եւ տիկին Կարապետ Անսուրեան, հայ Աւետարանական եկեղեցւոյ ներկայացու-

ցիչ տեր եւ տիկին Յակոբ Կանիմեան, Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութեան ատենապետուհի տիկին Աստղիկ Ալեքսանեան-Փափագեան, ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիղի ատենապետ տիար Սարգիս Վարձպետեան, Ս. Պողոս Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ տիար Յովսէփ Կիւմիւշեան, Ազգային Իշխանութեան անդամներ իրենց տիկիններով, մշակութային, բարեսիրական, մարզական միութեանց վարչական անդամներ, Պողոսեան Ազգային վարժարանի տնօրէնուհի օրդ. Շուշան Կանիմեան, Նախկին տնօրէնուհի տիկին Պերճուհի (Սրբուհի) Ներսեսեան եւ Աղեքսանդրահայ հոծ բազմութիւն մը:



Օր. Մերի Գարթալեան ելոյթի պահուն

Օրուան հանդիսավար տիար Հրանդ Վարձպետեան իր բացման խօսքին մէջ նշեց, թէ ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ վարչութիւնը գիտակից իր առաքելութեան, անմիջապէս իր կարելին ըրաւ ունենալու վերոյիշեալ ժապաւենը եւ զայն ներկայացնելու Աղեքսանդրահայութեան:

Ապա՝ ան բեմ հրաւիրեց օրիորդներ Մարի Մազլումեանը (հայերէնով) եւ Մերի Գարթալեանը (անգլերէնով) ժապաւենին մասին լուսաբանութիւններ տալու ներկայ հասարակութեան:



Հարիրամեակի Բ. ձեռնարկին ներկայ հասարակութիւնը



ՂԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՓԱՌԱՊԱՆԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՎԱԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Փորձառութիւնը ցոյց է տալիս, որ մարդասիրական կազմակերպութիւններին նրանք են յարատեւում, որոնք ճշգրիտ կերպով են կարողանում գնահատել ժամանակի պահանջները եւ այդ վերակազմակերպում իրենց գործունեութիւնն եւ վերաիմաստաւորում իրենց առաքելութիւնը: Միւսներն անյետ կորչում են, փոփոխութիւնների քամին քշում է նրանց:

Բայց լոկ գործունեութեան եւ առաքելութեան վերակերտումը բաւարար չէ: Անհրաժեշտ է նաեւ հաւատարմութիւն սկզբունքներին եւ նուիրումն ունենալ՝ կատարուած աշխատանքներին: Միայն այս գործունեների առկայութեան պայմաններում կարող է որեւէ կազմակերպութիւն իրաւական եւ բարոյական իրաւունք ունենալ յարատեւելու:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը պատկանում է այդ կարգի կազմակերպութիւնների թուին: Այս օրերին Երեւանում են այդ համազգային կառոյցի վարչական ղեկավարներն ու գործադիր անդամները՝ մասնակցելու մէկ տարի առաջ Գահիրեւում (Եգիպտոս) մեկնարկած հիմնադրման 100-ամեակի տօնակատարութիւնների փակման հանդիսութիւններին:

ՀԲԸՄ-ն հարիւր տարեկան է: Այդ առիթով խմբագրութիւնն ստացել է Փարիզի Նուպա-

րեան գրադարանի աշխատակիցներ Ռէյմոն Գերոգեանի եւ Վահէ Թաշճեանի խմբագրութեամբ Ֆրանսայում հրատարակուած, «ՀԲԸՄ: Հարիւրամեայ պատմութիւն» շքեղ ալպոմ – երկհատորեակի անգլերէն տարբերակը: Արժեքաւոր այս կոթողային աշխատանքը, որը հրատարակուել է ֆրանսերէն, անգլերէն եւ հայերէն լեզուներով, հնարաւոր է եղել լոյս ընծայել Նազար եւ Արտեմիս Նազարեանների (ԱՄՆ) առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ: Հատորը ֆրանսերէնէ անգլերէն է թարգմանել Գ. Մ. Կօշկարեանը:

Հաստ, փայլուն, լաւորակ թղթի վրայ տպագրուած 265 էջանոց առաջին հատորը բաղկացած է երկու գլխաւոր՝ «Նախակարապետներ եւ Վերակառուցում» բաժիններ եւ ընդգրկում է 1906–1940 թուականները: Առաջին բաժինը բացուում է ՀԲԸՄ-ի ներկայ նախագահ Պերճ Սեդրակեանի նախաբանով եւ հեղինակների առաջաբանով: Այնուհետեւ 17 գլուխներում ներկայացուած են բարեգործական կազմակերպութեան սկզբնաւորման եւ առաջին 40 տարիների գործունեութեան զանազան փուլերը:

Բարեգործութիւն, մարդասիրութիւն եւ օգնութիւն: Աւանդութիւն եւ բարեփոխութիւն առաջին անգամ յօդուածում Ռէյմոն Գերոգեանը տարբեր հասարակութիւնների ընդհանուր

(շար. յաջորդ էջը) →

Նշենք, որ «Թայմ» շաբաթաթերթի երոպական հրատարակութիւնը իր 12 Փետրուար 2007 թիւին մէջ ամբողջ էջ մը յատկացուցած էր հայոց ցեղասպանութեան, փաստագրական տեղեկութիւններով: Խմբագրութիւնը հրատարակութեան հետ միասին անվճար կը տրամադրէր նաեւ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով 52 վայրկեան տեւողութեամբ վերոնշեալ խտասալիկը:

Այս նախաձեռնութեան պատճառը 6 Յունիս 2005 թուականի նոյն շաբաթաթերթի թիւին հետ վճարովի տրամադրուած խտասալիկն էր, որ իբրեւ թէ Թուրքիոյ զբօսաշրջիկութիւնը գովազդելու կը ծառայէր, մինչ ան կը պարունակէր Հայոց Ցեղասպանութեան մասին նենգամիտ յերիւրանքներ:

Սխալը ուղղելու համար «Թայմ» իր 17 Հոկտեմբեր 2005-ի թիւին մէջ, ֆրանսահայ հինգ կազմակերպութիւններու կողմէ ստորագրուած նամակ մը հրապարակած էր եւ խմբագրութիւնը ներողութիւն խնդրած հայութենէն:

Ժապաւենին սրտամձիկ տեսարանները կրկին յիշեցուցին անցեալը, որ թէեւ անցեալ է, բայց չէ մոռցուած խնկելի յիշատակը անոնց՝ մեր մէկուկէս միլիոն նահատակներուն:

Փակման պատշաճ խօսքով ելոյթ ունեցաւ Աղեքսանդրիոյ հոգեւոր հովիւը եւ ապա Տէրուսական աղօթքով փակեց հանդիսութիւնը:

Թղթակից
Նազարեթ Գարթալեան



մարդասիրական աշխատանքների ֆոնի վրայ բացայայտում է հայկական եկեղեցու ազգապահպանման եւ բարեգործական դերը սկսած դեռ 6-7-րդ դարերից: Այս յաջորդական 6 գլուխներում նա ներկայացնում է, ՅԲԸՄ-ի սկզբնաւորումը, ՅԲԸՄ-ի առաջին խիզախ ձեռնարկումները, Ապտուլիամիտից մինչեւ երիտթուրքերի յեղափոխութիւնը, 1906-1909 թթ., Ատանա եւ Տեորթեոլ, Ապրիլ 1909: Շրջադարձ ՅԲԸՄ-ի պատմութեան մէջ, ՅԲԸՄ-ն եւ նրա առաքելութիւնը: 1909-1912 թթ., ՅԲԸՄ-ն եւ Ասիական Թուրքիայի բարեփոխումները: 1912-14 թթ. եւ բարեփոխումների ձախողումը եւ Ա. աշխարհամարտի բռնկումը, յօդուածները:

Նախակարապետները բաժնի յաջորդ 11 գլուխներում Վահէ Թաշճեանը շարունակում է կազմակերպութեան գործունեութեան ուսումնասիրութիւնը եւ անդրադառնում հետեւեալ թեմաներին:

Պատերազմի ժամանակաշրջանի օգնութեան աշխատանքները Բոր Սայիտի փախըստականների համար, ՅԲԸՄ-ի մարդասիրական օգնութիւնը Պաղեստինում՝ ցեղասպանութիւնից փրկուածների շրջանում 1917-18 թթ., ՅԲԸՄ-ի աշխատանքները Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում եւ Իրաքում (յետապատերազմեան շրջան), Դամասկոս: Տեղահանուածների հաւաքագրում եւ հայրենադարձութիւն, յետպատերազմեան Յալէպ: Վախ եւ սարսուռի վայր հայ փախստականների համար, Մարդասիրական աշխատանքներ Իրաքում Մուսուլ եւ Պաղտատ: Ցեղասպանութիւնից փրկուածները Լիբանանում եւ Պաղեստինում՝ Ա. աշխարհամարտի աւարտին, Յայ փախստականները Մերձաւոր Արեւելքի նորաստեղծ աշխարհում, ՅԲԸՄ-ի վերադարձը Կիլիկիա: Յոյս եւ հիասթափութիւն, Մարդասիրական աշխատանքները Կիլիկիայում: Մրցակցութիւն եւ համագործակցութիւն, Ֆրանսական նոր քաղաքականութիւնը: Կիլիկիայի լքումը, որբերի տեղափոխութիւնը եւ հայերի զանգուածային արտահոսքը:

Երկրորդ՝ Վերակառուցումի բաժինը ՅԲԸՄ-ի նութեան 1920-ականներից մինչեւ մեր օրերը կատարուած զանազան ոլորտների ընդարձակման աշխատանքների մասին է հիմնականում եւ ընդգրկում է հետեւեալ գլուխները, գրուած, բացի առաջինից, Վահէ Թաշճանի կողմից:

ՅԲԸՄ-ի գլխաւոր կեդրոնի տեղափոխումը Փարիզ 1921-ի Մայիսին եւ դրա վերափոխումը 1924-ի Յունիսին զուիցերիական օրէնքներին

համապատասխան գործող ընկերակցութեան: Կիլիկիայից դուրս գալը: Նոր մարտահրաւերներ Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում եւ Կիպրոսում: Փախստականների առաջին ճամբարները Սիրիայում, Պաղեստինում եւ Կիպրոսում: Չափահաս որբերի ընդգրկումը հասարակութեան կեանքում: ՅԲԸՄ-ի գլխաւոր պարտականութիւններից մէկը, ՅԲԸՄ-ն եւ Խորհրդրային Յայաստանը: Խորհրդային իշխանութիւնների հետ համագործակցելու դժուարին աշխատանքը: Յունաստան տասնեակ հազարաւոր հայերի ապաստան եւ ՅԲԸՄ-ի դերը Սիրիայում եւ Լիբանանում հայկական (մշտական) շրջաններ հիմնելու գործում: Այս գլխում հայերի վերաբնակեցման խնդիրը Նանսէնեան գրասենեակի վերահսկողութիւնից տեղափոխում է ՅԲԸՄ-ի տնօրինութեանը եւ վերջ է գտնում ճամբարներուն ժամանակաւոր ապրելու հարցը:

Երկրորդ հատորը, որն առաւելապէս հիմնուած է անհատ անձնաւորութիւնների դերակատարութիւնների մասին պատմող անմիջական տեղեկութիւնների վրայ, ընդգրկում է 1941-2006 թուականները: Առանձին բաժիններով ներկայացուած են 1946-48 թուերի ներգաղթի կազմակերպչական, սփիւռքահայ համայնքների կազմաւորման, կրթական, մարզական եւ մշակութային օճախների հիմնադրման, ինչպէս նաեւ Լուիզ Մանուկեանի նախագահութեան ժամանակահատուածում Յայաստանում իրագործուած աշխատանքները:

Թէեւ հեղինակները իրենց խօսքում չեն յաւակնում համապարփակ ներկայացնել ՅԲԸՄ-ի ամբողջ գործունեութիւնը եւ յոյս են յայտնում որ հետագայում ուրիշները կը լրացնեն բաց թողնուածը, այդուհանդերձ, ի պատիւ նրանց, պէտք է խոստովանել, որ տիտանական աշխատանք է կատարուած: Լուրջ գիտական մօտեցումով օգտագործուած են բազմաթիւ արխիւային նիւթեր, մեծ մասը՝ առաջին անգամ: Յատորները հարուստ են նկարներով եւ քարտեսներով:

Վերջում աւելացնենք, որ գրքերին կից Մանուէլ Թուլաճեանի կողմից պատրաստուել է նաեւ վաւերագրական մի ֆիլմ, որը նպատակ ունի ամբողջացնելու գրքերի տեղեկութիւնները:

«Ազգ»

Յակոբ Ծուլիկեան



ՐԱՍԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՅՈՒՇԱՐԱՆՂԵՍ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

«Ցեղասպանության 92-րդ տարելիցի այսօրը, այո՛, մեկ անգամ եւս սզանք մեր միլիոնավոր հայրենակիցների եղեռնական կորուստը, բայց եւ յիշենք, որ 1.5 միլիոն նահատակների արեան պահանջը այդ չէ, այլ այն, որպէսզի ներկայ ու գալիք սերունդները կերտեն այնպիսի մի հզօր ու անպարտ հայրենիք, որն ի վիճակի լինի ապահովել, իր զաւակների անվտանգութիւնը, ժողովուրդի յարատեւումը, դառնայ ձգող փառասը աշխարհով մեկ սփռուած իր զաւակների համար»:

Յելիոպոլսոյ Նուպարեան Ազգային Վարժարանի Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ, 22 Ապրիլ 2007-ի երեկոյեան, Ապրիլեան Եղեռնի 92-րդ տարելիցին առթիւ, Եգիպտահայ Յոգեւոր Պետերու հովանաւորութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպած համագաղութային Յուշահանդէսին որպէս պատգամախօս յատկապէս հրաւիրուած ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւոր Յրանուշ Յակոբեանի Ցեղասպանութեան, անոր բնոյթին ու հետեւանքներուն, ճանաչման գործընթացին եւ Յայաստանի ու Սփիւռքի ուժերուն համադրութեամբ հայ ազգը դէպի յաւերժութիւն առաջնորդելու ուղիին մասին արտասանուած եռամաս, համապարփակ եւ կուռ խօսքէն հատուած մըն է վերոյիշեալ պատգամը զոր ան փոխանցեց այդ օր այդ սրահին մէջ ներկայ, ցեղասպանութենէն վերապրած մեր ժողովուրդի զաւակներուն ժառանգներուն՝ Յոգեւոր Պետեր, Դիւանագետներ, Ազգային Իշխանութեան անդամներ, Եգիպտոսի Գահիրէ քաղաքին մէջ համայնք դարձած հայ ժողովուրդի զանազան կառոյցներու ներկայացուցիչներ,

որոնք այդտեղ էին անգամ մը եւս յարգանքի տուրք տալու իրենց նահատակներուն, ուխտելու մնալ հայ ու փոխանցել մայրենին իրենց ժառանգներուն եւ ուկնդրելու խօսքը հայրենի յարգարժան հիւրին, զոր յանուն կազմակերպիչ մարմնին իր բացման խօսքէն ետք հանրութեան ներկայացուց տիար Նորայր Տօփլէթեան:

Յուշահանդէսին գեղարուեստական բաժինը ներկայացուց «Արաքս» երգչախումբը: Գահիրէի Ազգային Առաջնորդարանին այս կարճ, սակայն բեղմնաւոր կեանքով ապրող երգչախումբին ամէն մեկ անդամը արժանի է գնահատանքի ու շնորհակալութեան: Խմբավար Միհրան Ղազէլեան միշտ Նորութիւն ունի հրամցնելու մեզի: Ի տես սակաւաթիւ անդամներով այս խումբին կատարած մեծ աշխատանքն ու ձեռք բերած յաջողութեան կարելի չէ չզարմանալ ու չհրճուիլ:

Տարբեր չէր նաեւ այս անգամ: Յուշահանդէսի խորհուրդին պատշաճ երգերու փունջը յուզեց ու նաեւ խանդավառեց ներկաները:

Եգիպտոսի Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբազան Եպիսկոպոս Մնացականեան իր փակման խօսքին մէջ կղերականի յատուկ իր հաւատքով նշեց «հայը կայ, կ'ապրի՛ եւ Ապրիլ 24-ը մեր ազգի ոչ թէ մահուան, այլ յաւերժութեան սկիզբն է... պիտի պայքարինք այդ մահուան գնով ձեռք ձգուած յաւերժութիւնը պահելու բոլոր բնագաւառներուն մէջ, թե՛ մշակութային, թե՛ հոգեւոր, թե՛ մտաւոր եւ թե՛ ֆիզիքական»:

Յուշահանդէսը վերջ գտաւ Յոգեւոր Պետերուն «Պահպանիչ»-ով:

ԱՐԻ ԵՐՁՆԿԱՅԵԱՆԻ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Գահիրէի ՀԲԸՄ-ի կրտսեր անդամներէն Արի Երզնկացեան, որ մաս կը կազմէ Յելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանի պասքէթպոլի կրտսերներու խումբին եւ նոյն ատեն խմբապետն է «Կեզիրա» մարզական ակումբի պասքէթպոլի 14 տարեկանէն վար խումբին, Կիզայի շրջանի ակումբներու խումբերուն միջեւ կայացած վերջին մրցաշարքին արձանագրած է առաւելագոյն կետերը, արժանանալով համապատասխան բաժակին:

Կը շնորհաւորենք Արիին ջանասիրութիւնը, մաղթելով որ ան հայ մարզիկի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի անունները միշտ բարձր պահէ ուր որ ալ ըլլայ:





ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ (Ապրուստ եւ դարման)

	Ապրուստ Ե.Ո.	Դարման Ե.Ո.	Բժիշկ Ե.Ո.	Գումար Ե.Ո.
54 հովանաւորեալ	187 950	66 770	150	254 870.95

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

	Աշակերտ	Գումար Ե.Ո.
Նախակրթական եւ Երկրորդական Զիմնարկներ	27	58 200.32
Բարձրագոյն Ուսումնական Զիմնարկներ (Գահիրէ)	21	97 534.20
Բարձրագոյն Ուսումնական Զիմնարկներ (Աղեքսանդրիա)	3	15 626.00
Այլ Ուսումնական Զիմնարկներ	1	1 600.00
Կրթաթոշակներու ծանուցում		283.50
Գումար	52	173 244.02

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

		Ե.Ո.
Արձանագրուած մասնակիցներ	407 հոգի	
Օգտուող մասնակիցներ	343 հոգի	
Յատկացուած Գումար		498 440.00

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Ո.
«Արեւ» թերթի արաբերէն լեզուով ամսօրեայ յաւելում	65 850.70
«Տեղեկատու» Պարբերաթերթ	20 612.25
Ուսումնասիրական պարապմունքի յատկացում	20 100.00
Գերազանցութեան մրցանակներ	11 218.25
Մշակութային ձեռնարկներ	13 279.83
Գիրքերու հրատարակութիւն	59 998.00
ԶԲԸՄ-ի կայքէջի բաժանորդութեան նորոգութիւն	550.00
ԶԲԸՄ-ի «Ծիածան» Մանուկապատանեկան Երգչախումբ	2 708.05
Գումար	194 317.08

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

	Ե.Ո.
Այծեմնիկ Տիկնանց Միութիւն	44 400.00
ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ - Զելիոպոլիս	197 271.71
ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ - Աղեքսանդրիա	11 330.00
Կոկանեան Սրահ	9 000.00
Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւն	3 000.00
ՀԲԸՄ Աղեքսանդրիա	5 149.50
ՀԲԸՄ Գահիրէ	15 193.50
Գումար	285 344.71



ԳԱՀԻՐԵԻ ՀԲԸՄ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Գահիրեի ՀԲԸՄ-ի տարեկան անդամական Ընդհանուր Ժողովը տեղի ունեցավ Չորեքշաբթի, 18 Ապրիլ 2007, երեկոյան ժամը 9.00-ին, Միութեան Յելիոպոլսոյ Սաթենիկ ճ. Չագըր մշակութային կեդրոնին մէջ:

Ընդհանուր Ժողովը քննարկելէ յետոյ օրակարգի բոլոր հարցերը, իր նիստին աւարտին համալրեց Միութեան Վարչութեան կազմը երեք անդամներով:

Նոյն ատեն, Ընդհանուր Ժողովը գնահատելով ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ տիար Պերճ Թերզեանի Միութեանս մէջ ունեցած աւելի քան քառասնամեայ վաստակաշատ գործունեութիւնը, զինք Գահիրեի ՀԲԸՄ-ի Պատուոյ Ատենապետ հռչակեց:

Միութեան Վարչութիւնը նոյն օրն իսկ իր անդրանիկ նիստը գումարելով, կազմեց իր դիւանը հետեւեալ ձեւով.-

Տոքթ.	Վիգէն Ճիգմեճեան	Ատենապետ
Տեարք	Օսնիկ Պըլըքտանեան	Փոխ Ատենապետ
	Մարտիրոս Պալատեան	Ատենադպիր
	Միսաք Չէչճեան	Գանձապահ
Տիար	Քրիստափոր Միքայէլեան	Խորհրդական
Տոքթ.	Ճորճ Սիմոնեան	Խորհրդական
Տեարք	Նորայր Տեօվլէթեան	Խորհրդական
	Կարէն Բեհիայեան	Խորհրդական
	Պերճ Բէչէճեան	Խորհրդական
Օր.	Ռուբինա Ասլանեան	Օժանդակ
Տիկին	Թալին Երզնկացեան	Օժանդակ
Օր.	Սոնա Մարգարեան	Օժանդակ
Տեարք	Գեորգ Աւանեան	Օժանդակ
	Յակոբ Գարակեօզեան	Օժանդակ
	Օսնիկ Կարիպեան	Օժանդակ

Այս առթիւ կը շնորհաւորենք վարչական նոր կազմին անդամները եւ Պատուոյ Ատենապետը, բեղուն եւ արդիւնաշատ գործունեութիւն մաղթելով իրենց:



ՈՉ ԵՄ Է ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ՄԱՐԶԱՐԱՆԻ ՊԱՏՈՒՈՅ ԱՏԵՆԱՊԵՏ ՀՐԱՆԴ ԹՈՒՖԱՅԵԱՆ



Ողբացեալ Հրանդ Թուֆայեան շուրջ 80 տարիէ ի վեր անդամ էր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ եւ ակելի քան 60 տարիէ ի վեր Գահիրէի ՀԲԸՄ-ին:

Որպէս երեց անդամ՝ ան անմիջական շփում ունեցած է Հելիոպոլսոյ ՀՄԸՄ-ի հիմնադիր սերունդին հետ եւ կազմաւորուած անոր շունչին տակ:

Ան հոգիով սրտով կապուած էր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ: Իրեն եւ իր սերնդակիցներէն շատերուն համար ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ իրենց ընտանեկան յարկին բնական եւ հարազատ շարունակութիւնն էր: Այդ սերունդին զաւակներուն քայլերը ինքնաբերաբար եւ առանց մտածելու մարզարան կ'ուղղուէին, հոն բաժնեկից ըլլալու իրենց մեծ ընտանիքին հետ ընդհանուր ուրախութեան թե տխրութեան:

Վերջին անգամ առիթ ունեցայ զինք տեսնելու 2006 Յոկտեմբերին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կազմակերպած պասքէթպոլի աւանդական մրցաշարքին, որ այդ անգամ նուիրուած էր նաեւ ՀԲԸՄ-ի 100-ամեակին:

Ան ձեռքերս բռնելով ըսաւ «շատ ուրախ եմ այս օրը տեսնելուս» ու ապա ակելցուց «Բարեգործականին յաջողութիւն կը մաղթեմ»:

Երբ հարցուցի իր առողջութեան մասին

իր բարի ժպիտով ըսաւ «տակաւին ոտքի ելք եւ կարգի կը սպասենք»:

Դժբախտաբար այդ կարգը սպասուածէն շուտ եկաւ: Մահը տեղի ունեցաւ 18 Ապրիլ 2007-ին:

Հրանդ Թուֆայեան երկար տարիներ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչական եղած է եւ իր կարելի սատարը բերած է վարչութեան գործունեութեան ու շրջան մը եղած է վարչութեան փոխ ատենապետը:

Գնահատելով իր աշխատանքը եւ իր երկարամեայ նուիրեալ անդամակցութիւնը, մարզարանին ընդհանուր ժողովը զինք ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Պատուոյ Ատենապետ հռչակած էր:

Իր նուիրեալ եւ հաւատաւոր անդամի տիպարը, թող բարի օրինակ հանդիսանայ մեր նոր սերունդին:

Մեր խոր ցաւակցութիւնները՝ իր հարազատներուն, յանձինս իր որդւոյն՝ տիար Կայծ Թուֆայեանի եւ հարսին՝ տիկին Անայիս Թուֆայեանի, թոռան եւ ամուսինին, ծոռան, ինչպէս նաեւ ՀԲԸՄ-ի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մեծ ընտանիքին:

Խունկ եւ աղօթք իր բարի յիշատակին:

Պ. Թ



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ



«Տեղեկատու»-ին մէջ մեծ հրճուանքով կ'արձանագրենք ծնունդը ՀՄԸՄ ՆՈՒՊԱ-ՐԻ պասքէթպոլի երէցներու նախկին եւ ներկայ խումբերու մարզիկներ տողք. եւ տիկին Հրայր Տրդատեանի, տէր եւ տիկին Կարօ Վարժապետեանի եւ տէր եւ տիկին Կարէն Թուրումպաճեանի մանչ զաւակներուն, յաջորդաբար նորածիններ

Ժիրայր Տրդատեանի
Ալէք Վարժապետեանի
եւ Պերճ ու Ալէն Թուրումպաճեաններու

Մեր ջերմ շնորհաւորութիւնները նորածիններուն ծնողներուն եւ մեծ ծնողներուն, տիար Ժիրայր Տրդատեանի, տիկին Սօսի Գարամանուկեանի, տիար եւ տողք. Վահէ Վարժապետեանի, տէր եւ տիկին Ուաէլ Ֆարահի, տիկիններ Անահիտ Վարժապետեանի եւ Անուշ Պալայեանի, տէր եւ տիկին Պերճ Թուրումպաճեանի եւ տիար Ճօ Նակկարի:

Կը մաղթենք որ նորածինները ըլլան առողջ եւ կայտառ, հասակ առնեն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մէջ ու մաս կազմեն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաջորդ միւսի պասքէթի խումբին:

Նոյնպէս կը շնորհաւորենք ծնունդը Գարլայի՝ նորածին դուստրը ՀԲԸՄ-ի երիտասարդ անդամներէն տէր եւ տիկին Ճօ Նիկոլեաններուն եւ թող տողք. եւ տիկին Անթուան Նիկոլեանի ու տէր եւ տիկին Սարգիս Մանուէլեանի:

Կը մաղթենք որ նորածինը ըլլայ քաջառողջ, ծնողասէր եւ ազգասէր եւ ուրախացնէ իր ծնողքն եւ մեծ ծնողները:

Աղեքսանդրիոյ ՀԲԸՄ-ի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամներ տէր եւ տիկին Յակոբ Կորտեաններ բախտաւորուած են մանչ զաւակով սը, զոր անուանած են Սեւակ:

Կը շնորհաւորենք Սեւակի ծնողքը եւ մեծ ծնողները Աղեքսանդրիոյ ՀԲԸՄ-ի Մասնաճիւղի ատենապետն ու տիկինը տէր եւ տիկին Սարգիս Վարժապետեանն ու տէր եւ տիկին Վահան Կորտեանները ու նորածինին կը մաղթենք առողջ եւ զուարթ կեանք:

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Ցառով կ'արձանագրենք մահը ՀԲԸՄ-ի բազմամեայ անդամ Արշալիր-Նշան Վարդեանի, որ տեղի ունեցաւ 7 Փետրուար 2007-ին:

Հանգուցեալը երկար տարիներ որպէս կրթական մշակ եւ տնօրէն ծառայած էր Գահիրէի Ազգային վարժարաններէն՝ եւ որպէս աւագ սարկաւագ եւ դպրապետ՝ Ս. Աստուածածին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներէն Ներս:

Թող իր հոգին հանգիստ գտնէ այս ասպնջական հողին մէջ:

«Տ.»

